

ՀՅԱՆ ԼՈՒՄԺՈՂԿՈՄԱԶ

Քաղաքական կուսավորության գաղչություն

ԾՐԱԳՐԵՐ

ՄԵԾԱՀԱՍՏԱԿԱՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊԲՈՑՆԵՐԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1935

379
5-98

F-MAR 2010

Հ Ա Խ Հ Լ Ո Ւ Փ Ո Վ Կ Ո Մ Ա Տ
Ք ա զ ա բ ա կ ա ն կ ա ւ ո ւ ր յ ա ն պ ա ր չ ո ւ ր յ ա ն

379
5-98

այ

Ծ Ր Ա Գ Բ Ե Ր

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐՐԱԿԱՆ ԳԳՐՈՑՆԵՐԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1935

Պատ. իմբ. Վ. Առավածառյան
Տեխ. իմբ. Դ. Զենյան
Արքադրիչ Ս. Շահպազյան



2906

38

ՈՒՍՄԱՆ ՊԼԱՆ

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ՄԵծահասակների հանրակրթական տարրական դպրոցները
քաղաքում ունեն 2, իսկ գյուղում՝ 3 տարրվա տեղողություն։
Քաղաքում ուս. տարին 9 ամիս է, իսկ գյուղում՝ 6 ամիս։
ՄԵծահասակների հանրակրթական տարրական դպրոցներն
ունեն հետևյալ ուսման պլանը.

№ Առաջնահարդարական պլան	Առարկաներ	Տարրական պլան	ՏԱՐՐԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԹԻՎԸ					
			Քաղաքում	Գյուղում	Դպրոցների պլան	Գյուղում	Դպրոցների պլան	Գյուղում
1. Հայոց լեզու	420	260	160	180	120	120	120	120
2. Թվաբանություն	300	180	120	140	80	80	80	80
3. Հասարակագիտություն	120	40	80	40	40	40	40	40
4. Աշխարհագիտ.	80	—	80	—	40	40	40	40
5. Բնագիտություն	80	—	80	—	40	40	40	40
6. Բուսաց լեզու	120	—	120	—	40	40	80	—
	Բնդամենը	1120	480	640	360	360	360	400

Ուսուական ըստ վեցորյակների և յոթնորյակների ունի
հետևյալ ժամերը.

№ Առաջնահարդարական պլան	Առարկաներ	Տարրական պլան	ԺԱՄԵՐԻ ԹԻՎԸ					
			Դպրոցների պլան	Գյուղում	Դպրոցների պլան	Գյուղում	Դպրոցների պլան	Գյուղում
1. Հայոց լեզու	7 (6)	4	9	6	6	6	6	6
2. Թվաբանություն	4 (5)	3	7	4	4	4	4	4
3. Հասարակագիտություն	1	2	2	2	2	2	2	2
4. Աշխարհագիտություն	—	2	—	2	2	2	2	2
5. Բնագիտություն	—	2	—	—	2	2	2	2
6. Բուսաց լեզու	—	3	—	—	2	2	2	2
	Բնդամենը	12	16	18	18	18	18	20

Պետհրատի տպարան Յերևան

Գլանի 235

հքատ. 3366

ուստակեր 815

արդիակ. 1000

Քաղաքային դպրոցների I դասարանում վեցորյակում պարագում են 12 դաս—չորս որ՝ որական 3 դաս. II դասարանում վեցորյակում պարագում են 16 դաս—դարձյալ չորս որ, բայց որական 4 դաս :

Գյուղական դպրոցների I և II դասարաններում յոթնորյակում պարագում են 18-ական դաս—վեց որ՝ որական 3 դաս. III դասարանում յոթնորյակում պարագում են 20 դաս—յոթնորյակում չորս որ՝ որական 3 դաս և յերկու որ՝ որական 4 դաս : Թե՛ քաղաքային և թե՛ գյուղական դպրոցներում բոլոր տարկաների համար տարեկան ժամերի թիվը նույն է և դրահամար ել կազմված ե միասնական ծրագիր : Թե՛ քաղաքում և թե՛ գյուղում առարկաներն անցնում են նույն ծավալով, սակայն քաղաքում 2 տարվա ընթացքում, վորովհետեւ ուս. տարին յերկար ե (աշխատանքի 40 վեցորյակ), իսկ գյուղում 3 տարվա ընթացքում, վորովհետեւ ուս. տարին կարճ ե (աշխատանքի 20 յոթնորյակ) :

Քաղաքային դպրոցների I դասարանում հայոց լեզվին I կեսամյակում տրվում ե 7, իսկ II կիսամյակում՝ 6 դաս (փակազծի միջին չափը) . թվարանությունը՝ I կիսամյակում տրվում ե 4, իսկ II կիսամյակում՝ 5 դաս (փակազծի միջին չափը) :

Ծանոթություն .— Հասարակագիտության ծրագիր առայժմ չի հրատարակվում : Մինչև լույս տեսնելը հասարակագիրության տեղ պետք ե անցնել քաղդրադիտություն՝ կուսթեկանածուական դպրոցների ծրագրով :

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Մեծահասակների հանրակրթական տարրական դպրոցի հայոց լեզվի ծրագիրը կազմված է հետեւյալ հինգ հատվածներից . Ընթերցանություն, ձեռագրի ուսուցում, բանավոր և գրավոր խոսքի զարգացում, քերականական և ուղղագրական նախնական գիտելիքներ ; աշխատանք դրագով և լրագրով :

Սակայն նյութի այսպիսի դասավորումը չի նշանակում, թե հենց այդ կարգով ել պետք ե անցնել : Ծրագիրը կառուցված է առանձին հատվածներով, վորպեսզի ուսուցչի համար ավելի պարզ և վորոշ լինեն այն գիտելիքներն ու ունակությունները, վորոնք սովորողները պետք ե յուրացնեն : Բոլոր հատվածների պարապմունքները պետք ե զնան զուգահեռաբար և միմյանց հետ կապակցված ձևով : Մասնավորապես խոսքի զարգացումը, վորպես աշխատանքի հիմնական մաս, լեզվական բոլոր տեսակի աշխատանքներում ամբողջ տարին պետք ե տեղ գտնի :

Նույնը պետք ե առել նաև ընթերցանության վերաբերյալ . խոսքի զարգացման ձևերից շատերը կապված են ընթերցանության հետ : Քերականության աշխատանքի մեծ մասը նույնպես տեքստերը կարդալու հիման վրա յե կատարվում : Լեզվի դասավանդությանը հատկացրած ժամերը զանազան բաժինների միջև

բաշխելիս նկատի պետք է ունենալ, վոր Ա գամարանում¹⁾ ժամանակի մեծ մասը հատկացվում է կարդալուն և դրելուն, իսկ Ա և Ա Պ դասարաններում ժամանակը համեմատական չափով բաշխվում է կարդալու, քերականության և խոռքի զարգացման աշխատանքների միջև։

Առանձին ուշադրություն պիտի դարձնել թե գեղագրության և թե ուղղագրության վրա։ Ուղղագրության ուսուցումը պետք է տանել հաջորդական կերպով, ըստ հնարավորության կապելով քերականության հետ։

Քերականության դասընթացն սկսվում է Ա դասարանում։ Ա դասարանում աշակերտներին պետք է սովորեցնել պարզ նախադասություն ճանաչելու ու կառուցելու։ Ա դասարանում սովորողները սովորում են յենքակա և սոսքովյալ տերմինները, իսկ նախադասության մյուս անդամները ընդհանուր առմամբ կոչում են լրացումներ։ Այդ դասարանում պետք է անցնել գոյական անվան հոլովումը, քայլի ժամանակների պարզ ըմբռնումը, անձնական դերանունների ճանաչումը և ածականների մասին գաղափար տալլը։ Ա դասարանում պետք է ավանդել հիմնական հոլովումները։ Այս դասարանում աշակերտները տերմինավորված գաղափար են ստանում նաև թվականների, դերանունների, մակարայների, կապերի, շաղկապների և ձայնարկությունների մասին։

Ա և Ա դասարաններում պետք է անցնել պարզ նախադասություններ, նախադասության սահմանումը պետք է տալ Ա դասարանում, իսկ Ա դասարանում պետք է գաղափար տալ բարդ նախադասության մասին և սովորեցնել մի քանի յենթականներով և մի քանի ստորոգյալներով նախադասություններ կառուցել։

Տարրական դպրոցում սովորողները ծանօթանում են կետադրության բոլոր նշաններին, վերջակետի և առողջության նշանների գործածության բոլոր դեպքերին, իսկ ստորակետի, միջակետի, չակերտի և մյուս նշանների՝ պարզ պարույն դեպքերին։

Բանավոր խոռքի զարգացման աշխատանքներում առանձին

1) Հայոց լեզվի, ինչպես և մյուս բոլոր տառարկաների, ծրագրերը կագծած են դպրոցի Յ տարբա տեսլության հաջողվ, ուստի և բացատրականներում գործածված դասարանները վերաբերում են զյուղական դպրոցներին։

Դյուղական դպրոցների Ա դասարանի հայոց լեզվի ծրագիրն անցնում են քաղաքային դպրոցների Ա դասարանի Յ կիսամյակում, Ա դասարանինը Ա դասարանի Բ կիսամյակում և Ա դասարանինը՝ Ա դասարանում։

ուշադրություն պիտի է դարձնել բարբառային լեզուն դրականով փոխարինելու, և խոսելիս, պարզ ու բարդ նախադասություններ կանոնավոր կառուցելու վրա։

Բառակազմության սովորական ձեերը սովորեցնելուց հետո Ա դասարանում սովորողներին պարզ ու հասկանալի կերպով պետք է սովորեցնել նաև բառակազմության նոր ձեերը՝ նորագույն հապալվումները, այն կապելով մեր ժամանակակից լեզվաշխնարարության դյուրըմբունելի խնդիրների հետ։

Գրանաճաչության վանդական մեթոդով։ Ա դասարանում գրաճանաչությունը պետք է անցնել համակցական մեթոդով։ Այս մեթոդը համակցական է կոչվում, վորովհետեւ ամբողջական բառերի, վանկային և հնչյունային մեթոդների լավագույն կողմերի և խորհրդային դպրոցի համար միանդամայն ընդունելի տարրերի համակցություն է ներկայացնում։

Այս մեթոդն ամբողջական բառերի մեթոդին նման է նրանով, վոր այս մեթոդով պարագելիս գրաճանաչության դասըմիշտ սկսվում է և վերջացվում է ամբողջական բառերով, իսկ տարրերվում է նրանով, վոր ամբողջական բառերը մեքնայորեն անդիր չեն անում։

Իսկ ամբողջական վանկերի մեթոդին նման է նրանով, վոր այրբենարանում պահպանվում է հետո վանկերից ալելի դժվար վանկերին անցնելու հաջորդականությունը։ Ստկայն այստեղ ել համակցական մեթոդը տարրերվում է վանկայինից։ Այս մեթոդով պարագելիս յերբեք չենք դիմում առանձին վանկերն անդիր անդուն։

Համակցական մեթոդը հնչյունային մեթոդի նման ձգտում է կարդալու պլրոցեսը հենց առաջին դասից միանդամայն հասկանալի դարձնել մեծահասակ անդրագետներին և մեծ ուշադրություն է գարձնում բառի հնչյունային կարգի վրա։ Ստկայն հընչյունային մեթոդից համակցական մեթոդը տարրերվում է նրանով, վոր ա) չի ընդունում մաքուր հնչյուններ և նրանց ձուլումը, բ) բացատրում է կարգալու և գրելու վարժությունից միանդամայն անջատ կատարված հնչյունների վարժությունները, գ) աշխատանքը միշտ կատարում է միայն իմաստալի նյութի վրա։

Այսպիսով գրաճանաչության համակցական մեթոդն ամբողջական բառերի և վանկերի, վերլուծական-համադրական, իսակն,

Կարդալ-գրելու մեթոդ և հնչյունա-տառաջին մշակման հիման
վրա:

Գրաճանաչության համակցական մեթոդը վերլուծական-հա-
մադրական մեթոդ է, վորովհետև հենց առաջին դասից ամբող-
ջական բառը հնչյունային վերլուծության և յենթարկվում և
նույն ժամանակ այդ հնչյուններից նույն բառը համադրվում
կազմվում. որինակ՝ վար, և ա բ, վար:

Այս մեթոդը գրաճանաչության խառն մեթոդ է, վորովհետև
առաջին դասից տպագիր և ձեռագիր շրիփում միասին են տըր-
քում:

Վերջապես այդ մեթոդը կարդալ-գրելու մեթոդ է, վորով-
հետև դարձյալ հենց առաջին դասից կարդալու և գրելու աշխա-
տանքները տպագում են միասին՝ զուգընթացաբար, այսինքն վո՛ր
ամբողջական բառը կարդում են, նույնն ել արտագրում են:

Կարդալու ուսուցման առաջին շրջանում (10-15 դաս) սո-
վորողները նախքան այբբենարանի տեքստը կարդալը, նրա մի-
ջի նոր տրվող բառերը նախապես կազմում են հատվող այրու-
բենի*) տառերով: Թղթի ներ չերաի վրա հատվող այբուբենի
տառերով կազմված բառերը նախապես վերլուծելը և ապա նույն
շարժական տառերով վերլուծած բառը համարելը մեծահա-
սակ անդրագետներին սովորեցնում և տարբերել առանձին հըն-
չյունները բառի մեջ և արտահայտել յուրաքանչյուր հնչյունը
նրան համապատասխան տառով: Այդպիսով կատարվում ե վոչ
միայն հնչյունային, այլ և նրան համապատասխանող տեսողա-
կան վերլուծություն: Վոչ մի դեպքում կարդալու համար չի կա-
րելի տալ այնպիսի բառ, վորի հնչյունային կազմը սովորողին
անձանոթ ե կամ անհասկանալի, վորովհետև առդ դեպքում նա
այդ բառը մեքենայաբար անգիր կանի: Յերբ սովորողները
վարժվում են շարժական տառերով կազմված բառերը կարդալու
մեջ, դրանից հետո միայն դասատուն շատ դանդաղ կարդում ե

*) Հատվող այբուբեն առանձին թերթի վրա տպված կա գրագիտու-
թյան դպրոցների Այբբենարան-ի վեցում յուրաքանչյուր սովորող այդ առ-
անունը կարդում յեկ պահում և լուցկու կամ մի այլ տուփի մեջ: Բացի այբբենա-
րանում տպված փոքրագիր համար այբուբենից, կա նաև առանձին թերթով
հրատարակած մեծագիր դասարանական հատվող այբուբեն, վորի հաստած տա-
ռերից բառեր և նախադասություններ են կազմվում գրտախտակի վրա և
ցույց են տրվում սովորողներին:

այրբենարանի համապատասխան տեքստը: Առաջին շրջանում
կարդալիս պետք է բառերն արտասանել ամբողջական վանկերով,
բայց յերկարացնելով, վորպեսզի աշակերտները մի անգամ ևս
կարողանան լսել հնչյունները բառերի մէջ և կապել նրանց հա-
մապատասխան տպագիր և ձեռագիր տառերի հետ: Դրանից հե-
տո սովորողները բարձրածայն կարդում են նախ անհատողեն
և ապա հաճախ նաև խմբովն: Նախ պիտի կարդալ տալ ուժեղ-
ներին և ապա՝ թույլերին, մյուսները հետևում են իրենց այր-
բենարանով:

Իսկ վհնչակես սովորեցնել գրել այրբենարանի առաջին շրջ-
անում:

Ձեռագրի ուսուցման առաջին շրջանում նախ պետք է սովո-
րողներին ընտելացնել գրելու տեխնիկային, վոր գրելիս պիտի
կանոնավոր նստել, գրիչը կանոնավոր բռնել և այլն: Ուսուցչի
անմիջական հսկողությամբ մեծահասակ անդրագետները պիտի
սովորեն վիտակիցրեն արտագրել կանոնավոր, մաքուր, պարզ և
վոչ չառ խոչոր տառերով այնպիսի բառեր և կարծ նախադա-
սություններ, վորոնք նախապես կազմված են հատվող այրուբե-
նի տառերով: Սկզբում ձեռագիր տեքստն արտագրում են գրա-
տախտակից, ապա սատիթանարար անցնում են այբբենարանի
ձեռագիր տեքստից արտագրելուն: Պետք է հետեւ, վոր սովո-
րողներն արտագրեն առանց տառ բաց թողնելու, կարողանան
գրել տառ-տառ, իսկ յերկար բառերը՝ վանկ-վանկ:

Կարդալու ուսուցման յերկրորդ շրջանում (30-40 դաս) խըն-
դիր և դրվում սովորեցնել կարդալ վոչ բարդ տեքստ՝ կազմված
ծանոթ տառերից, առանց նախապես հատվող այրուբենի տա-
ռերից այդ տեքստը կազմելու: Այս շրջանում վերջացնում են
գրաճանաչությունը, ավարտում են այբբենարանի մասը և այս-
պիսով հիմնականում տիրապետում կանոնավոր ընթերցանու-
թյան տեխնիկային: Յերկրորդ շրջանում կարդալու հիմնական
ձեռ դասարանական բարձրածայն ընթերցանությունն ե, այ-
սինքն յերբ սովորողները հերթով կարդում են հոգլածի առան-
ձին հատվածները: Անպայման պետք է ապահովել յուրաքանչյուր
գասը բոլորի կողմից կարդալը, յեթե վոչ միևնույն ժամին, գո-
նե հաջորդ ժամին:

Զեռագրի ուսուցչան յերկրորդ շրջանում պետք է սովորող-ներին նախաղատը ասան, մոր նրանք կարողանան ինքնուրույն պրել:

Դրա համար այլաւ շրջանում հիմնականում պետք է հիշողությամբ գրել սովորեցնել, ինչպես և գրել ուսուցչի արտասահմած ուղղադրական տեսակետից հեշտ բառեր և համառոտ նախաղասություններ՝ խուսափելով այնպիսի քառերից, վորոնց գրություններ չի համարվում և այսպես; գրատախտակին գրված կարծ նախաղասությունն արտադրել են տալիս՝ ջնջելով նախ մեկ, ապա յերկու և հետո՝ յերեք բառեր:

Այս յերկրորդ շրջանում սովորողների մեջ պիտի զարդացնել ուղղագրական ունակությունները, մեծատառի գործածության պարզագույն դեպքեր (վերնագիրը, նախաղասությունը, հատուկ անունն սկսվում են մեծատառով), վերջակետի գործածությունը վորակես նախաղասության վերջի նշանի, յենթաժնայի գործածությունը տողադարձի ժամանակ:

Մ Ր Ա Գ Ի Բ

ԴՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԱՍԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԱՍԱՐԱՆ
Ա. ԿԻՍԱՄՄՅՈՒՆ

Ա. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարողանալ առանց տառեր բաց թողնելու և կրկնությունների կարդալ հասկող այրութենի տառերով կազմած բառեր, պարզ ու մատչելի բառերից կազմած համառոտ նախաղասություններ, ուսուցչի կողմից գրատախտակին գրած բառեր ու կրծատ գրություններ, դասագրքի մատչելի հողվածներ և վոտանավորներ:

Հետեւ, վոր իր կարդացածն ու արտասանածը լինեն կանոնավոր, կետադրության և առողանության նշանների համաձայն:

Աստիճանաբար վարժեցնել կանոնավոր, արտահայտիչ և բարձրաձայն կարդալուն, իսկ ընթերցարանի բաժնում սկսել նաև ինքնուրույն կերպով լուս գիտակցական կարդալու փորձեր:

Սովորեցնել հողվածը մտսերի բաժանել և վերնագրել:

Կարողանալ անհասկանալի բառերը կամ նախաղասություններն առանձնացնել:

Բ. ԶԵՌԱԳՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Գրաճանաչությունն անցնելուց առաջ 2—3 ժամ հատկացնել տառերի ելեմենտների վարժություններին և ընտելացնել գրելու տեխնիկային (գրելիս կանոնավոր նստել, մատիտը կանոնավոր բռնել և այլն):

Ուսուցչի անմիջական հսկողությամբ սովորել կա-
նոնավոր, մաքուր, պարզ և վոչ շատ խոշոր տառերով
գրել:

Կարողանալ գրատախտակից գիտակցորեն ու ճիշտ
արտադրել, առանց տառ բաց թողնելու, բառ-բառ, խել
յերկար բառերը՝ վանկ-վանկ, բայց վոչ տառ-տառ:
(Սկզբնական ըրջանում տալ այնպիսի նորմադասու-
թյուններ, վորոնք նախապես կազմվում են հատվող այ-
բուրենի տառերով):

Աստիճանաբար անցնել այբբենարանի ձեռագիր
տեքստից արտադրելուն:

Նախապես վարժ կարդալ սովորելուց հետո կարո-
ղանալ այբբենարանի տպագրից արտադրել:

Սովորել հիշողությամբ բառեր և պարզ նախադա-
սություններ գրել, ինչպես և գրել ուսուցչի արտասա-
նած՝ ուղղագրական տեսակետից ճիշտ բառեր, խու-
սափելով այնպիսիներից, վորոնց գրությունը չի հա-
մարատասխանում արտասանությանը:

Դ. ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պարզել սովորողների ունեցած բառապաշարը և
ստուգել նրանց ըմբռնումը: Հարստացնել սովորողների
բառապաշարը շատ գործածական հասարակական-քաղա-
քական միջազգային և տեխնիկական բառերով: Պայ-
քարել դասակարգայնորեն խորթ բառերի գործածու-
թյան դեմ:

Հետեւյալ գրական լեզվի մաքությանը և աշխատել
աստիճանաբար վերացնել բարբառային ձևերը:

Սովորեցնել կանոնավոր և աղատ պատմել իրենց
դիտողությունների, ապրումների, կատարած հասա-
րակական և արտադրական աշխատանքների մասին,
ժողովում կամ ուղիություն լսածի, կինոյում, գործարա-
նում և այլուր տեսածի մասին:

Կարողանալ հողվածին վերաբերող հարցերին կարձ
պատասխաններ տալ:

Վարժեցնել ինքնուրուցյն կերպով պատմելու փոք-
րիկ պարզ հողվածների բովանդակությունը՝ սկզբույժ
հարցերի միջոցով, ապա առանց հարցերի:

Կարդացածի հիմնական միտքը ամփոփել:

Կարողանալ լողունդ կազմել:

Կարողանալ պատմել կարդացած գրքույկների հա-
մառուս բովանդակությունը և իր տպավորությունները:

Կարդացածի չուրջը մշակված հարցերի պատաս-
խաններն ինքնուրուցյն կերպով գրի առնել կարճ նախա-
դասություններով:

Գրատախտակի վրա կանխապես ապահովել գրվե-
լիք բառերի ուղղագրությունը. սովորեցնել ինքնուրուցյն
կերպով կազմել անվանացուցակ, լցնել 5—6 հարցից
բաղկացած անկետ, գրել կարճ նամակ, պարզ հասցե,
հեռագիր, ստացական, լիազորագիր:

Ուսուցչի անմիջական հսկողությամբ դասարանում
մշակել պատի լրագրի համար կոլեկտիվ և անհատական
թղթակցություններ:

Դ. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ծանոթացնել, վոր մեր խորքը կազմված է նախա-
դասություններից:

Սովորեցնել պարզ նախադասություն կառուցել:

Կարողանալ նախադասությունը բառերի բաժանել,
բառերը՝ վանկերի և վանկերը՝ հնչյունների:

Կարողանալ նախադասության մեջ զոնել մտքով
իրար հետ կապ ունեցող բառեր:

Հարցերի ողնությամբ (նրանց տերմինների) վո-
րոշել նախադասության գլխավոր անդամները:

Դիտենալ վերջակետի գործածությունը: Կարողա-
նալ ուսուցչի ասած պարզ նախադասությունները գրել՝
սկսելով մեծատառով և նախադասության վերջում
վերջակետ դնելով:

Սովորել մեծատառի գործածության պարզագույն դեպքերը. գիտենալ, վոր վերնագիրը, գրության սկիզբը, մարդկանց անունը և ազգանունը, քաղաքների, գյուղերի, գետերի, լեռների, փողոցների, գրքերի անունները գրվում են մեծատառով:

Գիտենալ չեշտի, հարցականի և բացականչական նշանների գործածությունը և դրա հետ կապված կանոնները:

Բառերը լսողությամբ տողագարձ անել: Գիտենալ տողագարձի պարզագույն դեպքերը, վոր տողագարձ անելիս տողագարձի նշան և գրվում, միավանի բառերը չի կարելի տողագարձ անել և այլն:

Գրության և արտասանության անհամապատասխանությունը. հնչյուն և տառ. գիտենալ, վոր բառի մեջ «և» սղագրության նշանը բաղաձայնից հետո յերկհընչյուն եվ (ար-եվ), ձայնավորից հետո յեվ (նա-յեվ) վանկի նշան ե. «և» սղագրության նշանը մեծատառ յեվ չունի, գրվում ե լրիվ յեվ (Յեվ բոպա): տառերով:

Գիտենալ, վոր ոժանդակ բայց գրվում և առանձին:

Յեղակի և հոգնակի, գիտենալ, վոր նով վերջացող բազմավանկ բառերը հոգնակիում գրվում են յերկու նով (սեղան-ներ):

Ե. ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐՔՈՎ ՅԵՎ ԼՐԱԳՐՈՎ

Ծանոթանալ գրքի անվանը, հեղինակին, հրատարակությանը, տիրաժին, մի խոսքով՝ գրքի արտաքինին: Վանկի ոգնությամբ գտնել հարկավոր հողվածը:

Ծանոթանալ շրջանային թերթերին՝ անուն, թիվ, №, որդան, խմբագրություն, թղթակցություն, առաջնորդող, թերթի գլխավոր բաժինները:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2-ՐԴ ԴԱՍՄԱՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1 ԴԱՍՄԱՆ Բ ԿԻՍԱՄՅՅԱԿ

Ա. ԲՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարողանալ կարգալ գիտակցորեն, ամբողջական բառերով, առանց տառեր բաց թողնելու, կապակցված, արտահայտիչ և կանոնավոր արտասանությամբ՝ պահպաննելով առողանության և կետագրության կանոնները:

Կարողանալ պարզ հողվածների բովանդակությունն ինքնուրույն կերպով պատմել՝ սկզբում հարցերի միջոցով, ապա՝ առանց հարցերի:

Կարողանալ կարգացած հողվածի վերաբերյալ տըրքած հարցերին պատասխաններ տալ:

Կարողանալ համառուտ ձեակերպել կարգացած հողվածի հիմնական միտքը:

Կարողանալ հողվածը մասերի բաժանել և վերնագրել:

Կարողանալ կարգացածից անհասկանալի բառերը կամ նախադասություններն առանձնացնել:

Զարգացնել լուր կարգալու ունակությունները:

Բ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախադասություն.—ի՞նչ և նախադասությունը, վերջակետի գործածությունը, առողանության նշանների գործածությունը:

2. Բառեր.— Բառերի կապակցությունը նախադասության մեջ, հատուկ անուններ (մեծատառի գործածությունը):

3. Հիշյուններ և տառեր.— Այլուրեն (փոքրատառ և մեծատառ, և սղագրության նշան), վանկ, տողագարձ (ը ձայնավորը տողագարձի ժամանակ), գրության և արտասանության անհամապատասխանությունը:

4. Նախադասության անդամները.— Յենթակա և

ստորոշյալ (համառոտ նախադասություն), լրացումները նախադասության մեջ (ընդարձակ նախադասություն):

5. Խոսքի մասեր.— Գոյական՝ գոյականների թիւվը գաղափար հնչյունափոխության մասին), գոյականների վորոշող հոդը (ը ձայնավորը բառասկզբում և բառավերջում), գոյականների հոլովումը (յ ձայնակապի ուղղագրությունը): Ածական: Գաղափար անձնական դերանունների մասին: Բայ՝ բայի գեմքը և թիվը, բայի ժամանակները (ներկա, անցյալ, ապառնի): Բայի բացասական ձեւը, բայի անորոշ ձեւը, բայի հրամայական ձեւը:

6. Տարրական գաղափար բառերի կազմության մասին.— Պարզ և բարդ բառեր, ածանցափոր բառեր (ամենադաժանական նախածանցների և վերջածանցների ուղղագրությունը):

7. Ուղղագրական վարժություններ.— Ուղղագրական բառարանից ոգտվելու ունակություն:

Գ. ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ. ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Սովորեցնել կանոնավոր գրական հայերենով իր մտքերը բանավոր սմբփոփ հաղորդել: Հարստացնել և ճշգրտել սովորողների բառարանը գիտելիքներից ստացված նոր բառերով: Կարողանալ ազատ պատմել իր արտադրական կյանքում տեսածի և լսածի մասին: Պլանով բանավոր զեկուցելու և մտքերը կանոնավոր արհատայտելու ունակությունների զարգացում: Շարունակել սովորողների բառապաշտիքի հարստացման աշխատանքները՝ նույնանիշ և հականիշ բառեր:

Շարունակել մաքուր, պարզ և կանոնավոր գրելու վարժությունները: Կարողանալ ուսուցչի արտասահմանամասում և ընդարձակ նախադասությունները գրել և դասագրելց գիտակցորեն և մասիսալ արտագրություններ կատարել: Կարողանալ ուսուցչի առաջադրած գրա-

վոր հարցերին պարզ պատասխաններ տալ: Սովորողների կյանքից վերցրած նյութը համառոտ կերպով լեզվական մշակման յենթարկել և դարձնել շարադրության նյութ: Նախորոք մշակված հոդվածների բովանդակության շուրջը գրել պարզ ինքնուրույն շարադրություն: Դասարանում մշակված հոդվածների ծրագիր կողմելու ունակություն: Փատի լրագրին պարզ թղթակցություններ գրել: Սովորեցնել անկետ, նամակ, հասցե, հայտարարություն, ստացական, լիազորագիր և դիմում գրել: Գրավոր աշխատանքի ժամանակ ուղղագրական բառարանից ոգտվելու ունակություն:

Դ. ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐՔՈՎ ՅԵՎ. ԼՐԱԳՐՈՎ

Շարունակել և խորացնել գրքով աշխատանքը. ծանոթանալ գրքի բովանդակությանը ցանկի և առաջարանի ժիջոցով: Հանբամատչելի մասսայական գրքույկների ընթերցանություն: Կարողանալ պատմել կարդացած գլոբերի բովանդակությունը: Գրադարաններից ոգտվելու ունակություն:

Ծանոթանալ պարբերականների տեսակներին, մասսայական լրագրերի բաժիններին: Կարողանալ կարձագորդումներ անել թերթում կարդացածի մասին:

ԴՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱԿԱՍԽՐԱՆ

ՔԱՂԱՔԱՅԹԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱԿԱՍԽՐԱՆ

Ե. ԲՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Շարունակել նախորդ դասարանի ձեռվ «Գրականության քրեստոմատիա»-յի հոդվածները, հանրամատչելի գրքեր, մանավանդ շրջանային թերթեր ավելի արտահայտիչ և սահուն կերպով կարդալու վարժությունները:

Գրքերի և հոդվածների տնային և դասարանական



ինքնուրույն և լուս ընթերցում: Բայտ պահանջի՝ բնագրից կարևոր հոդվածների և մտքերի ընտրություն և արտադրություն:

Բ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախադասության տեսակները.— Նախադասություններ մի քանի յենթականերով. նախադասություններ մի քանի ստորոտյալներով. նախադասություններ մի քանի համադասակ լրացումներով. նախադասություններ կոչականներով. պարզ և բարդ նախադասություններ. գլխավոր և յերկրորդական նախադասություններ: Ուղղակի խոսք:

2. Խոսքի մասեր.— Գոյականի ի, ու և ան հոլովումները: Անձնական, հարցական (միայն ո՞վ, ի՞նչ) և ցուցական գերանուններն ու սրանց հոլովումը: Գաղափար դիմորոշ և ստացական հոդերի մասին: Բայերի անցյալ անկատար և գաղակատար ժամանակները: Թվական անուն. քանակական և դաստիան. սրանց ուղղագրությունը: Մակրայ: Նախադրություններ և հետադրություններ: Շաղկապ: Զայնարկություն:

3. ԲԱՆԱԿԱՋՄՈՒԹՅՈՒՆ: Բարդ բառեր.— Ա հոդակապ. յե՛րը և դրվում և յե՛րը չի դրվում: Գիտենալ, վոր բարդ բառերի առաջին բաղադրիչ մասնի-ով վերջանալու դեպքում՝ ի՞ն ա հոդակապի հետ դառնում ե ի: Հնչյունափոխություն:— Աւ և ի ձայնավորների փոխվելը ը-ի (ջուր և ջրաղաց, կիր և կրաքար) կամ բոլորովին զեղչվելը (ամիս և ամսավերջ, անասուն և անասնական), և ձայնավորի փոխվելը ի ձայնավորի (հանդես-հանդիսի): Ածանցավոր բառեր:— Նախածանց՝ ան, ապ, դժ, տ, չ, գեր, արտ և այլն. վերջածացներ ատ, ոյ, արան, ստան, եղեն և այլն. ածանցները փոխում են բառի իմաստը՝ նրան ուրիշ վորակ տալով (ածուխ բառն առարկա յե ցույց տալիս, իսկ ածխային՝ հատկություն): Գոյականացնող և ածականացնող մի քանի ածանցներ և նրանց ուղղագրու-

թյունը: Գաղափար հիմքի և վերջավորության մասին: Նորագույն հապալումներ (գյուղիորհուրդ, ըրջկոմ, ըրջգործկոմ, ՀՍԽՀ, ՄԱՊՀ, Համ կկ և այլն) և նրանց ուղղագրությունը:

4. Բառերի իմաստը:— Համանիշ և նույնանուն բառեր: Բառերի առումները:

5. Կետադրության նշաններ:— Վերջակետի, միջակետի, ստորակետի և բուժի գործածության ամփոփում և լրացում: Առողանության նշանների գործածության ամփոփում: Կետադրության մյուս նշանների գործածության վերաբերյալ կրկնողական վարժությունները: Նախադասության տեսակներն ու խոսքի մասերն անցնելիս սովորեցնել ստորակետի գործածությունը բարդ, մի քանի յենթականերով և մի քանի ստորոգյալներով, համադաս լրացումներով, կոչական բառերով, ձայնարկություններով նախադասությունների մեջ, բութի գործածությունը համադաս լրացումներ ունեցող նախադասությունների մեջ՝ թվարկության ժամանակ, միջակետի և չակերտի գործածությունն ուղղակի խոսքի մեջ, գիտենալ միության և անշատման գծերի գործածությունը:

6. Քերականական և ուղղագրական գիտելիքների ամփոփում, լրացում և սիստեմավորում:— Քերականական վերլուծության վարժություններ: Ուղղագրական վարժություններ. ո և թ, դ և խ, ֆ և կ տառերի ուղղագրությունը:

Գրավոր աշխատանքների ժամանակ ուղղագրական բառոգրքույինց ովտվելու վարժություն:

Ուղղագրական տետրակ պահել և այնտեղ նշանակել այն բառերը, վորոնց գրությունը գժվար ե:

Գ. ԲԱՆԱԿՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԴԱՑՈՒՄ

Կարողանալ պատմել կարդացած գրքերի համառոտ բովանդակությունը և իր տպավորությունները:

Ավելի արագ և ազատ, ավելի մաքուր ու պարզ

գրելու վարժություն թե մի տողանի և թե, յերբեմն,
անտով թղթի վրա:

Համառոտ շարադրություն գրելու վարժություն՝
սկզբում նախապես մշակված պլանով և ապա՝ առանց
պլանի:

Կապակցված կերպով գրել իր համառոտ կենսա-
դրությունը և իր առաջիկա անելիքները:

Ընտրած թեմայով ինքնուրույն պարզ նկարագրու-
թյուններ գրել:

2-րդ դասարանում սովորած գործնական նշանա-
կություն ունեցող ավելի բարդ գրությունների վարժու-
թյուններ՝ դիմում, հեռագիր, հայտարարություն,
հացե, անկետ և դրամի փոխադրագիր:

Դ. ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԲՈՎ ՅԵՎ ԼՐԱԴՐՈՎ

Գրքով և լրագրով կատարվող աշխատանքի խո-
րացում: Վարժեցնել պատի և շրջանային թերթերին
թղթակցելու տեխնիկային:

РУССКИЙ ЯЗЫК

ВВЕДЕНИЕ

Начальная общеобразовательная школа взрос-
лых может дать только предварительное знаком-
ство с русским языком, усвоение которого может
быть затем расширено и укреплено в повышенной
школе для взрослых, а также путем пользования рус-
скими газетами, книжками и общения с русскими.

Отсюда в результате изучения русского языка
в начальной школе учащиеся должны приобрести:

- умение понимать несложную устную речь
культурно-бытового, политico-экономического и
технического содержания,
- умение понимать такую же несложную пе-
чатную и письменную речь, т. е. читать легкую бро-
шюру и нетрудную газету (например „Коммунист“),
- умение написать несложную деловую бумагу
(заявление, расписку).

Программа

II КЛАСС В ГОРОДСКИХ ШКОЛАХ,
II И III КЛАССЫ В СЕЛЬСКИХ ШКОЛАХ¹⁾

I. Предварительный устный курс

1. Практическое усвоение первых разговорных
фраз. Приветствия (здравствуйте, прощайте). Простые
вопросы и ответы на них: кто ты? — Я рабочий,

1) В сельских школах в II классе проходят только грамо-
ту, букварную часть, а в III классе продолжают по этой же
программе.

колхозник, служащий.—Как вас зовут? Сколько вам, лет? и т. д.

2. Распоряжения, связанные с работой.—Сядьте встаньте, откройте дверь, начинайте работу, кончайте работу, приходите ко мне, пойдите домой! и т. д.

3. Положительные и отрицательные ответы.—Это стол?—Да, это стол. Здесь сельсовет?—Да, сельсовет здесь. Здесь завод?—Да, завод здесь. И т. д.

Вопросы и ответы, необходимые для выяснения названий предметов—Что это?—Это машина.—Где правление?—Правление тут, там... и т. д.

4. Устные беседы на различные темы: учебные предметы, здание и части его, предприятие и его отделы, времена года, труд на заводе, в колхозе, машины, инструменты и орудия и т. д.

II. Обучение грамоте.

Постепенное усвоение чтения и письма по-русски, в связи с работой по учебнику. Чтение и письмо слов и коротких предложений.

ВИДЫ РАБОТЫ

1. Предварительная устная беседа для усвоения слов урока чтения.

2. Устный и звукобуквенный анализ и синтез слов, предназначенных для усвоения.

3. Чтение этих слов и кратких предложений.

4. Составление новых слов на основе произведенного звукобуквенного анализа.

5. Письмо слов и коротких предложений

6. Чтение плакатов и подписей под картинами и рисунками.

7. Чтение лозунгов и заучивание их.

8. Заучивание наизусть текстов коротких революционных песен.

III. Развитие устной речи.

(Параллельно с прохождением алфавита и последующей работой до конца курса).

Темы бесед: Счет по-русски. Названия времен года и месяцев. Метрические меры. Продукты питания. Названия предметов одежды и обуви, мебель, посуда, огород, поле, завод, цех. Занятия трудящихся. Гигиена и санитария в домашней жизни. Труд в колхозе, совхозе, на заводе. Норма новых слов, подлежащих активному усвоению, на урок определяется учителем примерно около 8. Учитель может вводить в свою речь и большее число новых слов, поясняя их значение, но не требуя их усвоения (пассивный запас слов).

IV. ЧТЕНИЕ.

На прохождение грамоты не нужно долго останавливаться. Необходимо поскорее перейти на чтение текста, статей и рассказов. На прохождение грамоты нужно отвести примерно уроков 10—12, ни в

коем случае не больше. Нужно перейти к чтению связного текста.

Чтение и разбор статей по учебнику и газете „Коммунист“. Ответы на заданные вопросы.

Чтение некнижного материала (объявлений, распоряжений, плакатов и т. д.).

V. ПИСЬМО.

1. Списывание выбранных мест из текста прочитанных рассказов.

2. Письменные ответы на вопросы, где требуется одно новое слово.

3. Умение четко, разборчиво и красиво написать имя, отчество и фамилию.

4. Умение написать адреса, расписки, заявления.

5. Письменные ответы на вопросы по несложной анкете.

VI. ГРАММАТИКА, ПРАВОПИСАНИЕ И ПУНКТУАЦИЯ.

1. Построение краткого предложения из двух слов. Построение предложений из 3-х, затем из 4-х слов.

2. Умение ставить точку после предложения.

3. Употребление большой буквы.

4. Употребление мягкого знака по слуху в конце и середине слова.

5. Употребление твердого знака.

6. Пользование вспомогательными словами—у, для, без, с, под, к, за.

7. Пользование соединительными словами—и, а, но.

8. Пользование словами—на, в, где, куда, откуда.

Сравнение со способами выражения тех же отношений в родном языке.

ОБЪЯСНИТЕЛЬНАЯ ЗАПИСКА.

В период проработки предварительного устного курса учитель постепенно приучает учеников понимать свою несложную речь—указания и распоряжения касающиеся работы: Скажи, отвечай, сядь, повтори и т. д. Порядок прохождения букв русского алфавита устанавливается в зависимости от тех трудностей, которые представляет их усвоение для армян. В первую очередь проходят буквы, общие для русского и армянского алфавитов и те, произношение которых не представляет затруднения для армян. Затем буквы, имеющие двоякое произношение в русской письменности (е, ё, я, ю), наконец буквы, соответствующие звукам, отсутствующим в армянском языке, или произносимые иначе (ы, й, щ).

Сначала берутся слова, которые пишутся так, как произносятся. Долго останавливаться на прохождении букв не следует, так как учащиеся уже знакомы со слиянием звуков и овладели процессами произношения на родном языке. На это нужно отвести не более 10—12 уроков.

Особое внимание следует обратить на ударение в русских словах.

Преподаватель должен учитывать и тот запас слов, которые имеют сходство с армянским произношением—социализм, совет, стол, стакан, диван, станок, верстак, машина, колхоз, совхоз, завод, школа, больница, аптека и т. д.

Грамматические сведения даются без всяких теоретических об'яснений.

Учителю необходимо ясно представить себе причины трудностей усвоения произношения звуков русского языка учащимися армянами.

В области словоизменения русского языка затруднение представляют окончания русских форм, крайне разнообразные и иногда имеющие в разных случаях разное значение.

Методы обучения неродному языку сводятся к двум основным: прямому или натуральному и переводному.

Как тот, так и другой метод в применении в „чистом“ виде обладает и достоинствами и недостатками. Из этого вытекает естественность и необходимость целесообразности комбинирования приемов и способов того и другого метода. В качестве же основного, стержневого метода рекомендуется прямой. Роль родного языка усиливается больше всего при изучении грамматики русского языка, когда моменты отличия русского языка от родного могут быть выявлены, более понятны и легче усвоены только методом сопоставления и сравнения.

Необходимо тут еще указать на то, что при прохождении грамоты нет необходимости повторения целиком процесса, имевшего место при обучении грамоте армянского языка, поскольку навыками чтения учащиеся уже владеют и остается им лишь усвоить русский алфавит. Внимание должно быть уделено особому правильному произношению целых русских слов, особых русских звуков.

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բացատրական

Թվաբանությունն ուսման պլանում և դասացուցակում պետք է տեղ գրավի իրքեւ ինքնուրույն առարկա և դասավանդվի 300 ժամ։ Ինչպես առանձին, ամեն մի առարկա, այսպես և թվաբանությունն, անցնելիս պետք է պահպանել ծրագրային նյութերի սիստեմն ու հաջորդականությունը։ Մի նյութից մյուսին կարելի յետ անցնել միայն այն ժամանակ, յերբ նախորդը գիտակցաբար ու հիմնովին յուրացված է։

Պետք է ողափել աշխատանքի այնպիսի մեթոդներով ու յեղանակներով, վորոնք ապահովում են սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը և ոժանդակում նրանց գիտակցաբար յուրացնելու մշակվող նյութը։ Յեզրակացություններ, հետևություններ սովորողներն իրենք պետք են հանեն ուսուցչի ոժանդակող հարցերի միջոցով՝ թե խնդիրներ և թե որինակներ լուծելիս։

Թվաբանության դասավանդումը պետք է լինի կոնկրետ, զննական։ Հիմնական հասկացողությունները յեզրակացվելու յեն կոնկրետ խնդիրներից։ Ամեն անգամ ուսուցիչը պարտավոր է վորոշ հաջորդականությամբ ու հանդամանորեն բացատրել անցնելիք յուրաքանչյուր թեմայի հիմնական հարցերը, նշել տիպական խնդիրներն ու վարժությունները և ցույց տալ բանալոր ու գրավոր հաշվելու ձևերը։

Թվաբանական գործողությունների ունակությունները լավ յուրացվում են նպատակահարմար թվային

նյութերի, որինակների միջոցով։ Բայց վերացական թվերով զանազան հաշիվներ կատարել տալով հարկավոր են նկատի ունենալ, վոր դրանք ինքնանպատակ բաներ չեն, այլ միայն միջոց խնդիրների լուծման համար։

Թվաբանության ուսուցմանը հատկացված ժամանակի մի կարևոր մասը պետք է տալ խնդիրների լուծմանը, ապահովելու սովորողների հմտությունն այդտեղ։ Շատ ցանկալի յե, վոր ուսուցչի առաջադրանքով նրանք ես հաճախակի կազմեն խնդիրներ, ոգտագործելով մեր սոցշինարարության առորյացից վեցրած հարուստ թվական տվյալները։

Հաշվումները պետք են կատարել թե գրավոր և թե բանավոր—նայած կարիքին։ Անհրաժեշտ է շատ մեծ տեղ տալ բանավոր հաշվին, վորը պետք է յուրացնել տալ թվաբանության ամբողջ կուրսը—ամբողջ թվերն ու կոտորակներն անցնելու ընթացքում։ Բանավոր հաշիվը վերաբերվում է վոչ միայն թվային որինակներին, այլ շատ հաճախ խնդիրների լուծման։ Բանավոր հաշիվը լինում է թե սովորական և թե հեշտացնող յեղանակներով։ Անհրաժեշտ է սովորողներին վարժեցնել այդ բոլորին։

Բացի դպրոցից՝ մշտական, պրանավորված աշխատանքներ պետք են կատարվեն նաև տանը, վորտեղ պետք են ինքնուրույն մշակվի, յուրացվի դասարանում արծարծված նյութը։

Ուսուցիչը պարտավոր է ստուգել, ուղղել սովորողների բոլոր, հատկապես գրավոր աշխատանքները։ Հակառակ դեպքում սխալները կտպավորվեն նրանց մեջ, դրա հետևանքով հաշվումներն ել կլինեն անճիշտ, և ուրեմն կարմատանան սխալ ունակություններ։ Սովորողներն ել կարող են և պետք են կատարեն ինքնստուգման աշխատանքներ—թե իրենց և թե փոխադարձարար ընկերների կատարած աշխատանքները։ Բայց վերջնական ստուգումն ամեն անդամ պետք են կատարի ուսուցիչները։

Թվաբանության սույն ծրագիրն ընդգրկում է մաս-
սայական տարրական դպրոցի լրիվ դասընթացը և Վ
դասարանի թվաբանության նյութերի մեծ մասը, բա-
ցառությամբ համեմատություն և հարաբերությունն
զլիսի: Քանի վոր սույն ծրագիրը կաղմված է մեծահա-
սակների հանրակթական դպրոցների համար, այդ
պատճառով ել վորոշ չափով տարրերությունն է փոքրահա-
սակների համապատասխան ծրագրից՝ յենելով տարի-
քային, սովորողների փորձի և այլ հանդամանքներից:
Որինակ՝ մեծահասակների թվաբանության կուրսում
տեղ չի տրված 1-ին և 2-րդ տասնյակի բանավոր հաշ-
վումներին, համբանքին և նման այլ տարրական դի-
տելիքներին, համարելով այդպիսիք իրեւ միանդամայն
ծանոթ բաներ: Տարրերությունը միայն նյութերին չի
վերաբերվում, այլ նաև ուսուցման յեղանակներին, մե-
թողներին:

Քաղաքային դպրոցների I դասարանի Ա. կիսամյա-
կում անցնում են գյուղական դպրոցների I դասարանի
ծրագրի մինչև 12-րդ կետը (ամեն մեծության թվեր).
I դասարանի Բ կիսամյակում անցնում են գյուղ. դըպ-
րոցների I դասարանի ծրագրի 12-րդ կետից մինչև II
դասարանի ծրագրի 5-րդ կետը (հասարակ կոտորակ-
ներ), այդտեղից սկսած անցնում են քաղաքային դըպ-
րոցների II դասարանում:

Մ Ր Ա Գ Ի Բ

ԴՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ I ԴԱՍԱՐԱՆՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ I ԴԱՍԱՐԱՆՆ
Ա. ԿԻՍԱՄՅԱԿ (ՄԻՆՉԵՎ 12-ՐԴ ԿԵՏ)

(12-րդ կետից մինչև II դասարանի 5-րդ կետը բաղմա-
քային դպրոցների I դասարանի Բ կիսամյակի ծրագիր)

1. Առաջին տասնյակի թվերի կարդարն ու դրելը:
Հարյուրի սահմանում կլոր տասնյակների կարդարը,
դրելը և համրիչի վրա դցելը: Զերոյի նշանակությունը

թվերը թվանշաններով գրելիս, խառը թվերի կարդարը
և գրելը հարյուրի շրջանում: Յերկնիշ թվերը համբիշի
վրա դցելը:

2. Բանավոր և համրիչով դումարում հարյուրի
սահմանում: Նույնը մի տողի վրա գրելով: Գումարման
նշանը (+ պլյուս): Հավասարության նշան (=):

3. Բանավոր և համրիչով հանում հարյուրի սահ-
մանում: Նույնը մի տողի վրա գրելով: Հանքան նշանը
(— մինուս):

Հանման ստուգումը գումարման միջոցով: Գու-
մարման ստուգումը հանման միջոցով:

4. Հարյուրի սահմանում բանավոր դումարման և
հանման պարզ յեղանակները: Գումարելիների տեղերը
փոխելը: Գումարելիների կլորացումը: Հանելիի կլո-
րացումը մինչև կլոր տասնավորներ:

5. Յեռանիշ և քառանիշ թվերի կարդարը, դրելը և
համրիչի վրա դցելը: Ծանոթացում թվերի կարգերին:
Ծանոթացում թվերի միավորների և հազարավորների
դասերին:

6. Թվերի գրավոր գումարումը (քառանիշ թվերի
սահմանում): Գումարելիներ. գումար: Ռուբլիներով և
կոպեկներով արտահայտած թվերի գումարումը:

7. Թվերի գրավոր հանումը (քառանիշ թվերի սահ-
մանում): Նվազելի, հանելի, տարբերություն կամ
մնացորդ: Զերոները հանման համար աված յերկու
թվերի մեջ: Հանման ստուգումը գումարման միջոցով:
Գումարման ստուգումը հանման միջոցով: Ռուբլիներով
և կոպեկներով արտահայտված թվերի հանումը:

8. Հնդանիշ և վեցանիշ թվեր: Դրանց կարդարը,
դրելը և համրիչի վրա դցելը: Այդպիսի թվերի գումա-
րումը և հանումը:

9. Հռոմեական թվանշաններ: Հռոմեական թվա-
նշաններով կարդարը և դրելը 30-ի սահմանում:

10. Միանիշ թվերի բազմապատկումը: Բազմա-
պատկման նշանը: Բաղմապատկելիի, բազմապատկիչ,
արտադրյալ: Միանիշ թվերի բազմապատկման աղյուս-

սակը: Արտադրյալի անփոփոխությունը բազմապատկելիի և բազմապատկելիչի տեղերը փոխելուց: Բազմանիչ թվերի բազմապատկումը միանիչով: Բազմապատկման այն գեղքերը, յերբ բազմապատկելիի վերջում և միշտում զերոներ կան: Խնդիրներ:

11. Յերկնիշ թվերի բաժանումը միանիչի վրա: Բաժանման նշան: Բաժանելի, բաժանարար, քանորդ: Բազմապատկման աղյուսակը չընելով ստանալ բաժանման աղյուսակ: Բազմանիշ թվերի բաժանումը միանիչի վրա: Բաժանման այն գեղքերը, յերբ քանորդի մի քանի կարգերում զերոներ են ստացվում: Բաժանման ստուգումը բազմապատկման միջոցով և ընդհակառակը: Մնացորդով բաժանում: Խնդիրներ:

12. Ամեն մեծության թվեր: Կարգերը և դասերը: Մեծ թվերի կարգայն ու գրելը: Հասկացողություն միւնի մասին. միլիոնների դաս: Հասկացողություն միւնի մասին. միլիարդների դաս: Մեծ թվերի գումարումը և հանումը:

13. Վորեե թիվ 10, 100, 1000 անգամ մեծացնելը և փոքրացնելը:

14. Միանիշ և բազմանիշ թվերի բազմապատկումը զերոներ ունեցող նշանակային թվերով (որ. 20, 400, 700): Բազմանիշ թվերի բազմապատկումը յերկնիշ թրդով: Բազմապատկում յեռանիշ թվով: Բազմապատկման այն գեղքերը, յերբ թե բազմապատկելիի և թե բազմապատկիչի վերջում կամ միջուց զերոներ կան: Բարդ անվանական թվերի բազմապատկումը:

15. Մետրական յերկարության չափեր - մետր, գեղիմետր, սանտիմետր, միլիմետր: Կիլոմետր: Ուղեղ գծիմետր, չափվածի չափումը: Թղթի վրա 7 մմ., 5 մմ. և այլ յերկարության ուղիղ գծեր գծելը: Մետրական ծանրության չափեր - գրամ, կիլոգրամ, ցենտներ, տոնն: Հեղուկների չափ - լիտր: Հողային չափեր - ար, հեկտար:

Անվանական թվերի վերածումը և անդրադարձումը: Բարդ անվանական թվերի գումարումը և հանումը: 16. Կրկնություն և ամփոփում:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՎՍՄՐԱՆ

Քաղաքային դպրոցների I դասարանի Բ կիսամյակ մինչեւ 5-րդ կետը, իսկ 5-րդ կետից սկսած սկսվում է ֆաղաքային դպրոցների II դասարանի ծրագիրը:

1. Կրկնություն և լրացում I դասարանում անցածի:

2. Բաժանում կլոր տասնյակների վրա: Բաժանում ամեն յերկնիշ թվի վրա (յերբ մնացորդ և ստացվում): Բաժանում յեռանիշ թվերի վրա: Բաժանման ստուգումը բազմապատկման միջոցով և ընդհակառակը: Բաժանման գժվար գեղքերը, յերբ քանորդի վերջում, միշտում զերոներ են ստացվում:

Բարդ անվանական թվերի բաժանումը:

3. Վարժություններ ամբողջ թվերի չորս դորձողության բանավոր ու գրավոր ունակությունների ամրապնդման համար:

Վարժություններ փակադերով և իքսով:

4. Թվերի բաժանականությունը. — 10-ի, 2-ի, 5-ի, 100-ի, 25-ի, 9-ի, 3-ի վրա բաժանվող թվերի բաժանականության նշանները: Թվերը պարզ բազմապատկիչների վերածելը: Ամենափոքր բազմապատիկ թիվ:

5. Հասարակ կոտորակներ:

Գաղափար կոտորակի մասին: Կոտորակի կարգարու և գրելը: Կոտորակի համարելիք և հայտարարը: Կանոնավոր և անկանոն կոտորակներ: Խառը թիվ: Կոտորակների մեծության համեմատումը: Խնչպես մեծացընել կամ փոքրացնել կոտորակը մի քանի անգամ: Խնչպես փոխել կոտորակի տեսքը, առանց փոխելու նրա մեծությունը: Կոտորակի կրծառումը: Կոտորակների ընդհանուր հայտարարի բերելը: Կոտորակների գումարումը: Կոտորակների հանումը: Կոտորակի բազմապատկումն ամբողջ թվով: Ամբողջը կոտորակով բազմապատ

կելը: Կոտորակի բազմապատկումը կոտորակով: Բազմապատկում խառը թվով: Կոտորակի բաժանումն ամբողջի վրա: Ամբողջի բաժանումը կոտորակի վրա: Կոտորակի բաժանումը կոտորակի վրա: Խառը թվի բաժանումը. բաժանում խառը թվի վրա:

6. Մասշտաբ: Կազմել և կարդալ ուղղանկյուն դիագրամներ ու գրաֆիկներ:

7. Կրկնություն և ամփոփում:

ԴՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԻՆ ԴԱՍԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՇԱՐԱՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ,

(Քաղաքային դպրոցների II դասարանի ծրագիրն սկսվում է գյուղական դպրոցների II դասարանի ծրագրի 5-րդ կետից):

1. Կրկնություն և լրացում II դասարանում անցածի:
2. Տասնորդական կոտորակներ. Գաղափար տասնորդական կոտորակի մասին: Զափումից ստացված թը վերի դրելը տասնորդական կոտորակի ձեվով: Տասնորդական կոտորակների կարդան ու գրելը: Տասնորդական կոտորակների մեծության համեմատումը: Տասնորդական կոտորակների մեծացնելն ու փոքրացնելը 10, 100, 1000 անգամ: Մեծ թվերը տասնորդական կոտորակի ձեվով արտահայտելը: Տասնորդական կոտորակների գումարումը: Տասն. կոտորակների հանումը: Խնդիրներ:

3. Տասնորդական կոտորակների բազմապատկումը. Տասնորդական կոտորակի բազմապատկումն ամբողջ թվով: Ամբողջի բազմապատկումը կոտորակով: Թվի մասը գտնելը: Տասն. կոտորակի բազմապատկումը տասն. կոտորակով: Արտադրյալի կորացումը: Խնդիրներ:

4. Տասնորդական կոտորակների բաժանումը. Ամբողջ թվերի բաժանումը, յերբ տասնորդական մասեր են ստացվում: Տասնորդական կոտորակի բաժանումն ամբողջ թվի վրա: Բանորդի փոփոխությունը բաժա-

նելին և բաժանարարը փոփոխելու հետևանքով: Ամբողջի բաժանումը տասն: Կոտորակի վրա: Համեմատական բաժանում: Տասն. կոտորակի բաժանումը տասն. կոտորակի վրա: Գտնել ամբողջը, յերբ տված ե թվի տասնորդական մասը: Հասարակ կոտորակը տասնորդական գարձնելը և ընդհակառակը: Միջին թվարանական: Խնդիրներ:

5. Տոկոսներ.— Գաղափար տոկոսի մասին: Խնչպես տասնորդական կոտորակը վերածել տոկոսի: Տված թվի մի քանի տոկոսը գտնելը: Տված տոկոսներով ամբողջը գտնելը: Տոկոսային հարաբերություններ: Խնդիրներ:

ՅԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

6. Գիծ և գծային չափեր.— Ուղիղ գիծ, հատված, գծային չափեր:

7. Ուղղանկյուն և քառակուսի.— Մակերես. ուղիղ անկյուն. քառակուսի: Ուղղանկյան և քառակուսու մակերեսների չափումը. քառակուսի մետրական չափեր: Ուղղանկյան մակերեսը: Քառակուսու մակերեսը: Ուղղանկյան և քառակուսու պարագիծը:

8. Զուգահեռ և ուղղահայց գծեր.— Զուգահեռ գծեր: Ուղղահայց գծեր: Հատակագիծ:

9. Ծավալների չափումը և հաշվումը.— Ուղղանկյուն զուգահեռնիստ կամ չորսու: Հորիզոնական և ուղղածիղ ուղղություններ: Խորանարդ: Ծավալների չափումը: Խորանարդ մետրական չափեր: Ուղղանկյուն զուգահեռնիստի ծավալը: Խորանարդի ծավալը:

10. Յեռանկյան և բազմանկյան մակերեսը.— Անկյուններ: Յեռանկյուն. յեռանկյան տեսակները. յեռանկյան մակերեսի չափում: Բազմանկյուն: Շրջան, շրջանագիծ, տրամագիծ, շառավիղ:

11. Երշանաձև դիագրամներ:

12. Կրկնություն ամբողջ անցածի:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բ Ա Յ Ս Ր Ա Կ Ա Ռ

Մեծահասակների հանրակրթական տարրական դպրոցներում աշխարհագրությունն ընդդրկում է հետեւյալ թեմաները՝

1. Ընդհանուր Փիզիկական աշխարհագրություն,
2. ԽՍՀՄ-ի աշխարհագրություն և 3. Կապիտալիստական յերկրների աշխարհագրություն. 1-ին թեման անցնում են գյուղական դպրոցների 2-րդ դասարանում, իսկ քաղաքային դպրոցներում՝ 2-րդ դասարանի Ա. կիսամյակում. 2-րդ և 3-րդ թեմաներն անցնում են գյուղական դպրոցների 3-րդ դասարանում, իսկ քաղաքային դպրոցներում՝ 2-րդ դասարանի Բ. կիսամյակում:

Դասավանդության ընթացքում պետք է նկատի ունենալ հետեւյալ խնդիրները.

1. Աշխարհագրության բոլոր թեմաներն ըստ հարկի պետք է անցնել նկարների դիտումներով, քարտեղների ու գլոբուսի կանոնավոր ոգտագործմամբ:

2. Դասավանդության ընթացքում պետք է ուսուցչի պատմածը հագեցած լինի կոնկրետ և ճշգրիտ որինակներով, փաստերով և զրույցը պետք է տարմի կենդանի ու աշխատյժ:

3. Սովորողների հետաքրքրությունը բավարարելու համար պետք է նրանց հանձնարարել ինքնուրույն կերպով ընթերցելու աշխարհագրական հանրամատչելի բըրոշյուրներ, ինչպես որինակ «Աշխարհի մեծ և ահեղ յեղինությունները», «Դեպի անհայտ հեռուները» և այլն:

4. Անցնելիք նյութը պետք է հարստացնել տեղական աշխարհագրական նյութերով. որինակ յեթե խոսվում է ընդհանրապես լեռների, լճերի, գետերի, դաշտավայրերի, բարձրավանդակների մասին և այլն՝ պետք է տալ նաև իր ըրջանի աշխարհագրական այդ կետերի առուները, վորոշել նրանց տեղը, նշանակությունը և

այլն. խոսվում է կլիմայի մասին՝ պետք է բնորոշել տեղական կլիման պայմանավորող հանգամանքները և այլն:

Մեծահասակների հանրակրթական դպրոցում սովորողներն այնքան պետք է աշխարհագրություն իմանան, վոր կարողանան ըմբռնել ֆիզիկական աշխարհագրության վոչ բարդ խնդիրները, քարտեզներից ոգտվելու հմտություններ ձեռք բերեն, քարտեզների վրա կարողանան փնտռել և գտնել լրացրում կարդացած նշանավոր քաղաքները, գետերը, յերկրները, ծովերը և այլն։ Միաժամանակ նրանք պետք է հասկանան այն կարեռ խնդիրը, վոր մարդկային հասարակությունը գիտության ու տեխնիկայի գարգացմանը զուգընթաց հետզհետեւ ավելի խորն և ուսումնասիրում և ճանաչում բնության ուժերը, պայքարում նրանցից վնաս տվողների գեմ և մյուսներն ոգտագործում, ծառայեցնում իրեն։ Այս կապակցությամբ նբանք պետք է ըմբռնեն, թե ինչպես խորհրդային իշխանությունը, հետզհետեւ ոգտագործում է յերկրի մինչև այժմ չողտագործած հնարավորություններն արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխում կատարում և բնության ուժերն ու հարստություններն ի սպաս զնում աշխատավորության կարիքներին ու շահերին, սոցիալիզմի կառուցման մեջ գործին։

Հստ առանձին թեմաների աշխատանքը պետք է տանել հետեւյալ կերպ.

1-ին թեմա (պլան և քարտեզ)։ — Այս թեման անցնելիս սովորողները պետք է քարտեզը հասկանալու և կարգալու հմտություն ձեռք բերեն։ Պլանի վրա դյուրությամբ է յուրացվում մասշտաբի գործածությունը և նրա ոգնությամբ տարածությունների չափումը։ Վարժությունները կատարվում են միայն զծային մասշտաբով։ Պլանից քարտեզին անցնելու համար տրվում է գաղափար յերկրի ճեկ մասին և բերվում յերկրի զնդանության պարզ ապացույցներ։ Մասշտաբի եյությունը և գործածությունը հասկանալու համար նպատակա-

Հարժար ե տարբեր մասշտաբով գծած քարտեզների վրա
չափումներ կատարել:

Աստիճանացանցը պետք է անցնել նախ գլորուսի-
վրա—ցույց տալ նրա վրա միջորեականներն ու զուգա-
հեռականները՝ բացատըլով նրանց նշանակությունը,
ուշադրություն դարձնել նրանց ուղղության վրա (հո-
րիզոնի վո՞ր կողմի ուղղությամբ են ձգվում), նրանց
մեծության վրա (բոլոր միջորեականներն իրար հավա-
սար են, իսկ զուգահեռականները բեվեռները դնալով
փոքրանում են, 60°-ի զուգահեռականը հավասար ե
մոտավորապես հասարակածի կեսին). գլորուսի վրա
պետք է գաղափար տալ նաև աշխարհագրական լայնու-
թյան և յերկարության մասին, ապա անցնել քարտեզի
աստիճանացույցին:

Անցնելով կիսագնդերի քարտեզին, պետք է պար-
զաբանել, վոր յուրաքանչյուր քարտեզ, վորպես կորըն-
թարդ մակերեսույթի հարթության վրա պատկերացնող,
չի կարող լինել միանգամայն ճիշտ. կիսագնդերի քար-
տեզի վրա սկսում ենք անցնել ցամաքի և ջրի բաշխումը
տալով նրանց պայմանական նշանները քարտեզի վրա:

Ծրագրում թվարկված են աշխարհագրական այն
անունները, վորոնք անհրաժեշտ մինիմումն են համար-
վում սովորողների համար. հարկավոր չե նոր անուն
ավելացնել, այլ անհրաժեշտ ե յուրացնել տալ շատերին
հարցնելով. որինակ՝ վո՞ր ովկիանոսների միջև և
դանվում Ամերիկան, Ատլանտյան ովկիանոսը վո՞ր աշ-
խարհամասերի միջև և դանվում: Հնդկական ովկիանո-
սի արևմտյան կողմում ի՞նչ աշխարհամաս և դանվում.
իսկ հյուսիսում, արևելքո՞ւմ և այլն և նույն ձևով
անցնել խոշոր ծովերը քարտեզի վրա ցույց տալով:

Դրանից հետո քարտեզի վրա պետք է ցույց տալ
նաև խոչոր պետությունները: Սովորողները լոել են այդ
յերկրների անունները. այժմ նրանց տեղը քարտեզի
վրա վորոշելով, գտնելով թե ԽՍՀՄ-ի նկատմամբ նրանք
վո՞ր կողմումն են գտնվում, ի՞նչ յերկրներով, լեռնե-
րով, գետերով կամ ծովերով են բաժանված իրարից

կամ ԽՍՀՄ-ից կլրացնի վորոշ չափով նրանց գիտելիք-
ներն այդ յերկրների մասին: Այս աշխատանքների ըն-
թացքում պետք է հաճախ հիշատակվեն նաև զուգա-
հեռականներն ու միջորեականները, հասարակածն ու
գլխավոր միջորեականը, և վորոշին այդ յերկրների
աշխարհագրական յերկարությունն ու լայնությունը:
իհարկե, քարտեզը կարգալու հմտությունը մի ժամում
չի ձեռք բերվում. նման աշխատանքներ միշտ պետք է
կատարել համապատասխան նյութերի անցման ժամա-
նակ:

Վորպես կանոն հարց ու պատասխանի միջոցով ան-
ցած ամեն մի թեման պետք է ամփոփել, կրկնել և ապա
անցնել հաջորդին:

2-րդ թեմայում (յերկրի ձևերը) պետք է ուսում-
նասիրել յերկրագնդի կազմությունը, յերկրի մակե-
րեսույթի վրա տեղի ունեցած կարեռագույն յերկույթ-
ները և յերկրի մակերեսույթի ձևերը: Դասավանդման
ընթացքում անհրաժեշտ ե ոգտագործել աշխարհա-
գրական նկարներ (հրաբուխների, լեռների և այլն):
Այս թեմայի նպատակն այն պետք է լինի, վոր սովորող-
ները խորացնեն քարտեզը կարգալու ունակություննե-
րը. հատկապես յերկրի մակերեսույթի տարբեր ձևերը
կարողանան վորոշել քարտեզի վրա և սովորեն այդ կա-
պակցությամբ աշխարհագրական անունների անհրա-
ժեշտ մինիմումը, վոր տրված և ծրագրի այս բաժնում:

3-րդ թեմայում (ովկիանոսներ, ծովեր, գետեր և
լճեր)՝ անհրաժեշտ ե գաղափար տալ յերկրագնդի
ջրային շերտի և նրա նշանակության մասին:

Այստեղ ևս ծանրության կենտրոնը մնում է քար-
տեզի վրա ջրային տարածությունների պայմանական
նշանները. անհրաժեշտ ե սովորողի աչքը վարժեցնել
քարտեզի վրա գետը, լիճը, ծովը, ովկիանոսը, ծոցը,
նեղուցը տարբերելու և ցույց տալու. դրա համար պետք
է վարժություններ կատարել քարտեզի վրա և յուրաց-
նել տալ ծրագրի այդ բաժնում տված աշխարհագրա-
կան անունները: Անցնելով ծովը (ջրի) թեմային, ցույց

սալով նեղուցներն ու ծոցերը, բնականաբար դիտվելու յեն նաև կղզիներն ու թերակղզիները և գաղափար տալով նրանց առաջացման մասին պետք է յուրացնել տալ կղզիների և թերակղզիների ծրագրում տված մինիմումը։ Հետաքրքիր աշխատանք կարելի յե կատարել այս թեմայի համաշխարհային ջրային մեծ ճանապարհները բաժինն անցնելիս, որինակի, վո՞ր ծովերն են միանում Սուեզի ջրանցքով, ի՞նչ աշխարհամասեր ե բաժանում Զիբրալտարի նեղուցը, Պանամայի ջրանցքը, ջրային ի՞նչ ճանապարհներով կարող ենք Ազովի ծովից դուրս գալ Ատլանտյան ովկիանոս և այլն, վորը և աշխատութություն կմտցնի նյութի դասավանդման մեջ և կնպաստի քարտեզը կարդացած ու այս թեմայում տված աշխարհական անունները յուրացնելուն։

4-րդ թեման (յերկրի որական և տարբեկան շարժումը) նպատակ ունի տալ սովորողներին դիտական պատկերացում յերկրի շարժման մասին։ Պետք ե հակադրել արևի յերեսույթական շարժմանը դիտական բացատրությունը յերկրի շարժման՝ մասին՝ իր առանցքի շուրջը (գիշերվա և ցերեկվա առաջանալը) և արևի շուրջը (տարվա յեղանակների առաջանալը)։ Պետք ե հարց ու պատասխանի միջոցով ստուգել ուսանողների դիտողություններն արևի յերեսույթական շարժման մասին տարվա տարբեր յեղանակներին, արևի բարձրությունը հօրիզոնից՝ կեսորին, որվա տեսպեսությունը, արևի տաքացնելու կարողությունը՝ կախված նրա ճառագայթների թեքության աստիճանից և ապա անցնել այդ յերեսույթների գիտական բացատրությանը։

Այս նյութն անցնելիս պետք է անպայման փորձեր կատարել գլոբուսի վրա (գասասենյակը մթնացնել և մոմի լույսի տակ շարժել գլոբուսը՝ ճիշտ պահպանելով առանցքի թեքությունը)։ Դասատուն չպետք ե մոռանա, վոր փորձերի ժամանակ առանցքի թեքության ճիշտ պահպանմամբ միայն հնարավորություն կունենա բացատրելու յեղանակների առաջանալը, ինչպես և

Հյուսիսային և Հարավային կիսագնդերում յեղանակների տարբերությունը։

Դժվար ե յերկրի և արեգակնային համակարգության առաջանալու խնդիրը սովորողներին ամբողջությամբ պարզաբանել։ Սակայն վորպես հասակալորդների կարելի յե ընդհանուր գծերով տալ յերկրի և մոլորակների արեգակնային զանգվածից առաջանալու գաղափարը և այդ Փոնի վրա—պարզել տիեզերքի առաջացման մասին կրոնական բացատրության (սուելդագործության) անհեթեթությունը և նրա դասակարգացմային ելությունը։

5-րդ թեման (կլիմա) անցնելով սովորողները պետք ե ճիշտ ըմբռնում ստանան կլիմայական յերեսույթների մասին։ Յույց տալով կլիմայական գտտիները կիսագնդերի քարտեզի վրա և սովորողների անձնական դիտողություններից ոգտվելով՝ պետք ե լուսաբանվի, թե ի՞նչ հանգամանքներից ե կախված վայրի կլիման (աշխարհագրական լայնության, վայրի բարձրությունը ծովի մակերեսույթից, լեռներով շրջապատված լինելը, ծովից հեռու կամ մոտ գտնվելը, ծովային տաք և ցուրտ հոսանքները և այլն)։

Անցնելով մթնոլորտային տեղումներին դասատուն պետք ե գիտական պարզ բացատրություններով ջախջախիսի այդ հարցում կրոնական պատկերացումները։ Մոտերքում ողերեսույթաբանական կայան գտնվելու դեպքում կարելի յե եքսկուրսիա գնալ և հասկանալի զրույցով տալ յեղանակի նախատեսման միջոցները, ինչպես և այդ տեսակետից պարզել այդ կայանների մեծ նշանակությունը դյուլատնեսության, ծովային և ողային հաղորդակցության խնդիրներում և այլն։

Այս բաժնի աշխարհագրական անունները (ծովային կլիմա ունեցող և խոնավ շրջաններ, անտառներ) սակագաթիվ են և դժվար չե նրանց յուրացնելը։

6-րդ թեման (յերկրագնդի բուսահողային գտտիները) պետք ե անպայման աշխատել բուսահողային գոտիների, առանձին լանդշաֆտային տեսարանների նկար-

ներով։ Հնարավորության դեպքում պետք է ոգտագործել մոդական լապտեր համապատասխան դիապոզիտիվներով։ Սովորողները պետք է կարողանան այդ գոնաները հոգաբուսական և կլիմայական հատուկ քարտեզի վրացույց տալ և համառոտ-կոմպլեքսային բնութագիր տան յուրաքանչյուր գոտուն։ Մարզու ներգործությունը բնության վրա պետք է դասատվի կողմից տրվի զրուցի ձևով և կոնկրետ որինակներով։ Արհեստական վոռոգում, անտառապատումներ, ճահճիների չորացում, արհեստական պարարտացում, նոր կուլտուրաների տարածում, խորհրդային լայնածավալ յերկրի բազմակողմանի ուսումնասիրության և նրա մինչ այժմ չուսումնասիրված ու չոգտագործած հարստությունների մշակումը և այլն։

Նման փաստերի հիման վրա միաժամանակ պետք է շեշտվի սոցիալիստական հասարակարգի, պրոլետարիատի ստեղծագործական թափի անհամեմատ առավելությունը կապիտալիստականի հետ համեմատած և վերջինիս մարդկային լավագույն կյանքի զարդացման ու հառաջադիմության արգելակ հանդիսանալը։

7-րդ թեմա (յերկրանդի բնակչությունը) անցնելիս պետք է ցույց տրվեն տարրեր ուսասաների պատկանող ժողովուրդների ներկայացուցիչների նկարներ, քարտեզի վրա ցույց տալ տարրեր ուսասաների պատկանող ժողովուրդների տեղաբաշխումը և կոնկրետ որինակներով պարզել բուրժուական ուսասայական թեորիայի հակագիտական և հակահեղափոխական Փաշիստական ընույթը։ Արժեքավոր կլինի, յեթե դասատուն հետաքրքիր զրույցներ կազմակերպի յերկրագնդի տարբեր ժողովուրդների կյանքի ու կենցաղի շուրջը (եսկիմոսներ, նենեցներ, տաք-դոտու բնակիչներ, անապատի բնակիչներ և այլն)։

8-րդ թեման (ԽՍՀՄ-ի Փիզիկական քարտեզը) պետք է սկսել ԽՍՀՄ-ի տեղը կիսագնդերի քարտեզի վրա վորոշելու և ԽՍՀՄ-ի Փիզիկական քարտեզին անցնելով։ ԽՍՀՄ-ի Փիզիկո-աշխարհագրական անուններից վորոշ

մասը սովորողներն արդեն անցել են կիսագնդերի (աշխարհի) քարտեզն ուսումնասիրելու ժամանակ։ Մնում է այդ նույնը շարունակել ԽՍՀՄ-ի Փիզիկական քարտեզի վրա և ավելի լայնացնել սովորողների Փիզիկո-աշխարհագրական գիտելիքների պաշարը ԽՍՀՄ-ի աշխարհագրության նկատմամբ։

Սովորողները քարտեզի վրա պետք է հիմնովին յուրացնեն ծրագրում տված աշխարհագրական անունները և ամեն մի առանձին գեպքում կանգ առնեն Անդրկովկասի, Հայաստանի և սովորողների շրջանի Փիզ. աշխարհագրության վրա։ Վերջինիս մինիմումը տված է ծրագրում և պետք է այն ամրացնել սովորողների մեջ։

ԽՍՀՄ-ի համառոտ տնտեսական աշխարհագրական տվյալները պետք է նույնպես անցնել քարտեզի վրա։ Տնտեսական տվյալներից վերցրված վերցրված են աչքի ընկնողները, վորոնց մեծ մասը սովորողները լսել են, գիտեն կամ կարդացել են թերթերում, այնպես վոր գժվար չի վինի նրանց յուրացումը։ Յերկրի տնտեսական հարստության առանձին որյեկտներն անցնելիս թուոցիկ կեզդով պետք է հիշատակել նաև թե ի՞նչ չափով, ի՞նչպես և ի՞նչի համար են նրանք ոգտագործվում։ Այս թեման մշակելիս ձեռքի տակ պետք է ունենալ նաև Անդրկովկասի և Հայաստանի քարտեզները։

9-րդ թեման (աշխարհի քաղաքական քարտեզը) համարյա ամփոփում է ընդհանուր Փիզիկական աշխարհագրությունը։ Այստեղ միայն տրվում են աչքի ընկնող և մեզ հարևան պետություններն ու նրանց մայրաքաջաները։ Այս թեման անցնելիս յուրաքանչյուր պետության տեղը ցույց տալիս, պետք է թուոցիկ տեղեկություններ տրվեն նրանց բնական հարստությունների, տնտեսության կարևորագույն ճյուղերի դրության, կառավարության ձևի, գաղութների ու մեզ հետունեցած հարաբերությունների (կապի) մասին։

Մ Ր Ա Գ Ի Բ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ Ա ԴԱՍԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ Ա ԴԱՍԱՐԱՆ
Ա. ԿԻՄԱՄՑԱԿ

1. ՊԼԱՆ ՅԵՎ ՔԱՐՏԵԶ

Գաղափար հորիզոնի մասին: Հորիզոնի կողմերը և նրանց գտնելը արևի, աստղերի և կողմնացույցի ոգնությամբ:

Պլանը վորպես վոչ մեծ հողամասի արտանկար: Պլանի նշանակությունը՝ յերկրի պաշտպանության և սոց. շինարարության գործում:

Կոլխոզի, գյուղի կամ քաղաքի պլանը: Ինչպես են գծում պլանը. մասշտաբ և նրա նշանակությունը. գծացին և թվային մասշտաբ: Հեռավորության չափումը պլանի վրա՝ մասշտաբով: Կարողանալ գծադրել պարզ պլան և կարդալ գծած պլանը:

Յերկրի ձեր: Ի՞նչպես ելին հնում պատկերացնում յերկիրը: Յերկրի գնդաճեռության մասին ապացույցներ. — Հորիզոնի լայնանալը վեր բարձրանալիս. դիտողություն ծովափից՝ հեռացող և մոտեցող շտեխնավիշարժմանը, յերկրի ստվերը լուսնի վրա— նրա խավարման ժամանակ: Յերկրագնդի մեծությունը: Գլորուսը վորպես յերկրի մողել: Դիտողություններ գլորուսի վրա՝ բեկեռներ, հասարակած: Յերկրի պատկերումը գլորուսի վրա: Աստիճանացույց. զուգահեռականներ—աշխարհագրական լայնություն: Միջորեականներ—աշխարհագրական յերկարություն. դիտավոր միջորեական և նրա նշանակությունը: Աստիճանների համարակալումը—լայնությունը՝ հասարակածից դեպի բեկեռը, յերկարությունը՝ գլխավոր միջորեականից դեպի արևելք և արևմուտք: Ֆամաքի և ջրի պատկերումը գլորուսի վրա: Աշխարհամասեր և ովկիանոսներ: Կիսագնդեր և նրանց քարտեզը:

Հորիզոնի կողմերը կիսագնդերի և առհասարակ

քարտեզի վրա: Զուրը և ցամաքը պատկերելը կիսագնդերի և առհասարակ քարտեզի վրա: Յույց տալ գլորուսի և կիսագնդերի քարտեզի վրա: Աշխարհամասեր՝ Յելրոպա, Ասիա, Աֆրիկա, Ավստրալիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Ամերիկա, Անտարկտիդա: Ովկիանոսները— Մեծ, Ատլանտյան, Հնդկական: Գլխավոր ծովերը՝ Հյուսիսային Բեկեռային, Բալթիկ, Հյուսիսային կամ Գերմանական, Միջերկրական, Սև ծով:

Գլորուսի և կիսագնդերի քարտեզի վրա ցույց տալ ԽՍՀՄ-ն, Անդլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Չինաստանը, Հնդկաստանը:

2. ՅԵՐԿՐԻ ԿԵՂԵՎԸ

Ատմոսֆերա, Հիդրոսֆերա, Լիտոսֆերա: Յերկրագնդի ներքին կառուցվածքը՝ կեղև, մազմա և միջուկ: Հրաբուխ և յերկրաշարժ: Յերկրագնդի կեղևի կազմությունը՝ նստվածքային և զանգվածային տեսակներ: Յերկրի մակերեսույթի ձևերը: Բացարձակ և հարաբերական բարձրություն: Դաշտավայրեր, բարձրավանդակներ, լեռներ և լեռնագաղաթներ. սրանց պատկերումը քարտեզի վրա:

Յերկրի մակերեսույթի հողմնահարումն ու վորոշումը:

Հանածո հարստությունները վորպես եներգիայի և հումքի աղբյուրներ: Հանածո հարստությունների (քարածուխ, նավթ, յերկաթ և այլն) տեղաբաշխումն ըստ աշխարհամասերի և խոշորագույն պետությունների: Կիսագնդերի քարտեզի վրա ուսումնասիրել աշխարհամասերի մակերեսույթը:

Յեվրոպայում.— Դաշտավայրերից՝ Արևելյան-Յեվրոպական, (ոռոսական, գերմանական, ֆրանսիակամ լոմբարդական, Միջին և Ստորին Դանուբյան), լեռներից՝ Ալպեր, Կարպատներ, Սկանդինավյան, Պիրինյան, Ալենինյան, Ուրալյան: Գագաթներից՝ Մոնթան: Հրաբուխներից Վեղուվ:

Ասիայում. — Դաշտավայրերից, Արևմտյան-Սիրի-
րական, Արալո-Կասպյան, Զինական, Միջագետք, Քու-
ռի և Ռիոնի:

Լեռներից՝ Տյան-Շան, Հիմալայ, Կովկասյան: Գա-
գաթներից՝ Եվերեսո, Մասիս, Ելբուս, Կազբեկ, Ա-
րագած.

Հյուսիսային Ամերիկայում. — Դաշտավայրերից
Միսիսիպիի: Լեռներից՝ Կորդիլերյան:

Հարավային Ամերիկայում. — Դաշտավայրերից՝
Ամազոնի:

Լեռներից՝ Անդյան (Կորդիլերների շարունակու-
թյունը):

Աֆրիկայում. — Լեռներից՝ Ատլասի:

3. ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐ, ԾՈՎԵՐ, ԳԵՏԵՐ ՅԵՎ ԼՃԵՐ

Ովկիանոսներ և ծովեր: Ովկիանոսների խորությու-
նը: Ծովային ջրի աղիությունը: Ծովային հոսանքներ—
տաք՝ գոլֆշտրեմ. ցուրտ՝ Կամչատկայի: Մակընթա-
ցություն և տեղատվություն: Ծովային ալիքները և ցա-
մաքի ափերի վողողումը: Ծոցեր, նեղուցներ, թերա-
կղզիներ, կղզիներ:

Ծովերի նշանակությունը (ջրային ճանապարհ, ձկնորսություն, և այլն): Համաշխարհային ջրային մեծ
ճանապարհները և պայքար նրանց համար: Նեղուցների
և կղզիների նշանակությունը ջրային ճանապարհների
վրա:

Ովկիանոսներ. — Մեծ, Ատլանտյան, Հնդկական:

Ծովեր. — Հյուսիսային Բեկոնային, Հյուսիսային
կամ Գերմանական, Բալթիկ, Միջերկրական, Կարմիր,
Ճապոնական, Բերինգյան:

Թերակղզիներ. — Սկանդինավյան, Պիրինյան, Ա-
պենինյան, Բալկանյան, Կոլա, Ղրիմ, Կամչատկա, Կո-
րեա, Հնդկաչին, Հնդկական, Արաբական, Փոքր Ասիա,
Ալյասկա:

Կղզիներ. — Գրելանդիա, Մեծ-Բրիտանիա, Ճապո-
նական, Սախալին, Չոնգյան, Անտիլյան, Ովկիանիա:
Նեղուցներ. — Զիբլարտար, Դարդանել, ԲոսՓոր,
Բերինգյան:

Ջրանցքներ. — Սուեզի, Պանամայի:

Ստորեկրյա ջրեր. — Աղբյուրներ, Հանքային աղ-
բյուրներ, տաք աղբյուրներ (հեյզեր), գետեր: Գետե-
րի վտակները, աջ և ձախ ափերը, հունը, ավազանը.
Գետերի տնտեսական նշանակությունը — վոռոգում,
սպիտակ ածուխ, ջրային ճանապարհ: Գետային ջրանցք-
ներ:

Գետեր. — Հոենոս, Գանուր, Դնեպր, Դոն, Վոլգա
(Ոկա և Կամա վտակներով), Որ (Իրտիշ վտակով),
Յենիսեյ, Լենա, Ամուր, Քուս, Արաքս, Միսիսիպի
(Միսուրի վտակով), Ամազոն, Նեղոս:

Լճեր. — Հոսող և չհոսող լճեր, աղի և քաղցրահամ
լճեր:

Լճերից. — Լադոգա, Ոնեգա, Կասպից, Արալյան,
Բայկալ, Սևան:

4. ՅԵՐԿՐԻ ՈՐԱԿԱՆ ՅԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Արեգակը վորպիս ջերմության և եներչիայի աղ-
բյուր յերկրի համար: Ջերմության փոփոխությունն
յերկրի վրա որվա տարբեր ժամերի և տարվա տարբեր
յեղանակներին: Արևի և մյուս լուսատուների յերեւ-
թական շարժումը: Բեկեռային աստղի հարաբերական
անշարժությունը:

Յերկրի որական շարժումը: Բեկեռները վորպես
անշարժ կետեր յերկրի որական շարժման ընթացքում:
Յերկրի առանցքը: Գիշեր և ցերեկ: Յերեկվա և գիշեր-
վա տևողության փոփոխությունը տարվա ընթացքում:
Ջերմության կախվածությունը արևի ճառագայթների
ուղղությունից (ճառագայթները թեք են ընկնում, յեր-
կրի վրա թե ուղղահայաց): Յերկրի տարբեկան պտույտն
արևի շուրջը: Յերկրի առանցքի թեքությունն իր որբի-
տի նկատմամբ և տարվա յեղանակները:

Արեգակնային համակարգություն։ Յերկիրը վորպես մոլորակ։ Համառոտ ծանոթություն յերկրի առաջցման մասին։ Կրոնական հայացքները տիեզերքի և յերկրի ծագման մասին։ Նրանց անհեթեթությունը և դասակարգային եյությունը։ Պայքար յերկրի ձեփի և շարժման գիտական տեսակետների համար. (կոպեռնիկոս, Զորդանոս Բղոբնոս, Գալլիլեյ)։

5. ԿԼԻՄԱ

Յեղանակ և նրա տարրերը. ջերմություն, քամիներ, տեղումներ։ Գաղափար կլիմայի մասին։ Կլիմայի նշանակությունը տնտեսության համար։ Պայքար կլիմայական վնասակար յերեռույթների դեմ։ Յեղանակային յերեռույթների հետ կապված կրոնական պատկերացումները։ Ողերեռութարանական կայանները և նրանց տված ոգուտները։

Արեգակի տարրեր բարձրությունը հորիզոնի նկատմամբ յերկրագնդի զանազան մասերում։

Յերկրագնդի բաժանումը կլիմայական հինգ գոտիների։ Արևադարձներ և բևեռային շրջաններ։ Արևի ճառագայթների անկման ուղղությունը հարավային և չյուսային կիսագնդերի վրա տարիվա տարրեր յեղանակներին։ Կլիմայական տարրեր գոտիների առանձնահատկությունները. — բարձր ջերմություն և ջերմաստիճանի տատանման բացակայություն տաք (այրեցյալ) գոտում։ Ջերմաստիճանի տատանումները տարիվա տարրեր յեղանակներին՝ բարեխառն գոտում։ ցածր ջերմաստիճան՝ ցուրտ գոտում։

Ցամաքի և ջրի անհամաչափ տաքանալը։ Քամիներ։ Ծովային հոսանքներ։ Ծովային և ցամաքային կլիմա։ Ծովային հոսանքների ազդեցությունը կլիմայի վրա։ Տեղի բարձրության ազդեցությունը կլիմայի վրա։ Մթնոլորտային տեղումներ և նրանց բաշխումը յերկրագնդի վրա։ Մթնոլորտային տեղումների համաշխարհային քարտեզը. խոնավ շրջանները (Գլինեյի ծո-

վափ, Սև ծովի Անդրկովկասյան և Ղրիմի ափերը)։ Յերկրագնդի անապատները (Սահարա, Գորի կամ Շամո, Արաբական)։ Անդրկասպյան կիսաանոնցատային ձրջաւենուց (կարա-կում, կիզիլ-կում)։

6. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՈՒՍԱՀԱՅՈՂԱՅԻՆ ՊՐԵՏԻՆԵՐԸ

Հողի բուսական և կենդանական աշխարհի կախումը կլիմայից։ սրանց գոտիական տեղաբաշխումը յերկրագնդի վրա։

Բեվեռային շրջաններ, տունդրաներ, անտառ, տափաստան, անապատներ, մերձարետղարձային շրջաններ, արևադարձային անտառներ և սավաններ։ Յուրաքանչյուր գոտու հողաբուսական և կենդանաբանական աշխարհի համառոտ բնութագիրը։

Բնության ոգտագործումն ու փոփոխումը մարդու միջոցով՝ կախված արտադրողական ուժերի զարգացման բնույթից և աստիճանից, արտադրողական հարաբերությունների սիստեմից (բնության ուժերի և հարաբերությունների ոգտագործման սահմանափակ հնարավորությունները կապիտալիստական հասարակարգում և անսահմանափակ հնարավորությունները՝ սոցիալիստական հասարակարգում)։

7. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Բնակված և չբնակված շրջաններ յերկրագնդի վրա։ Յերկրագնդի բնակչության քանակը և բաշխումն ըստ աշխարհամասերի։ Յերկրագնդի խիտ բնակված շրջանները։

Մարդկության բաժանումն ուսսաների. նրանց բնակչության շրջանները յերկրագնդի վրա։

Բուրժուական ուսսայական և ազգային թեորիաները. նրանց գասակարգային եյությունը։ Գաղութային աշխատավոր ժողովուրդների և գունավոր ցեղերի շահագործումն ու վոչչացումը կապիտալիստների կող-

մից: (Նեղրերն ու կարմբամորթներն Ամերիկայում):
Ստրկական աշխատանքը դադութներում: Ազգային հարցի լուծումը ԽՍՀՄ-ում:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ III ԴԱՍԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ II ԴԱՍԱՐԱՆԻ
ԲԿԱՍԱՅՅԱԿ

8. ԽՍՀՄ-ի ՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

1. ԽՍՀՄ-ի աշխարհագրական գիրքը և տեղադրումը Յեվրոպայում և Ասիայում: ԽՍՀՄ-ի ձովային և ցամաքային սահմանները: Նրանց նշանակությունը յերկրի պաշտպանության և տնտեսական հարաբերությունների տեսակետից՝ ԽՍՀՄ-ի սահմանները պետք յուները:

ԽՍՀՄ-ի առանձին մասերը. Յեվրոպական մաս, Կովկաս (Հյուսիսային և Անդրկովկաս), Միջին Ասիա, Սիբիր և Հեռավոր Ասրւելք:

ԽՍՀՄ-ի սահմանամերձ ծովերը. — Հյուսիսային Բելեռային, Բարենցի, Սպիտակ, Կարայի, Բերինդյան, Ռիսոտի, Ճապոնական, Սև, Բալթիկ: Բալթիկ ծովի միջնական ծոցը:

Նավահանգիստները. — Լենինգրադ, Մուրմանսկ (չսառչող), Արխանգելսկ, Իգարկա, Վլադիվաստոկ, Նովորոսիյսկ, Ռիեսա, Բաթում: Հյուսիսային բելեռային ծովի ճանապարհները և նրա նշանակությունը ԽՍՀՄ-ի համար: «Սիբիրյակովի», «Չելյուսկինի» և «Լիտկեյի» արշավանքը: Պայքար բեվեռային ճանապարհ յուրացնելու համար:

Թերակղզիները. — Կոլա, Կամչատկա, Ղրիմ:

Կղզիներ. — Սախալին, Նոր Յերկիր:

2. ԽՍՀՄ-ի մակերեսութիւն կազմությունը. դաշտավայրերի գերակշռությունը. Լեռների ծայրամասերում գտնվելը:

Դաշտավայրեր. — Արևելյան Յեվրոպական, Արևմտյան-Սիբիրական, Արալ-Կասպիական, Քուռի,

Բարձրավանդակները. — Միջին-Բուսական, Մերձ-Ալուրան, Դոնեցի, Միջին Սիբիրական, Հայկական: Լեռները. — Ուրալյան, Ղրիմի, Կովկասյան (Ելբրուս և Կազբեկ), Պամիրի, Տյան-Շան, Ալտայան, Կամչատկայի հրաբուխները. Անդրկովկասի լեռները՝ Աջարո-Ախալցխայի, Սուրամի, Փամբակի, Շահդաղի, Ահմանդանի, Զանգեզուրի: Լեռնագագաթներից՝ Արագած:

3. ԽՍՀՄ-ի սպատակար հանածոները: Հանքային հարստությունների հետազոտված ձինելը ցարական Ռուսաստանում: Այս տեսակետից խորհրդային իշխանության նվաճումները:

Քարածխային ավազաններ. — Դոնեցի, Կուզնեցի, Կարագանդայի, Մերձմուկովյան, Ուրալի, Տկիբուլիի և Տկվարչելիի:

Նավթ. — Բազու, Գրոզնի, Մայկոպ, Վրաստան, Եմրա, Ուրալ, Սախալին, Միջին Ասիա:

Յերկար. — Կերչ, Կրիվոյ Ռոտ, Ուրալ, Կուրսովի, Մագնիստային անոմալիան, Դաշքեսան-Կիրովաբադի մոտ:

Մարգանեց. — Զիատուրի (Վրաստան):

Պղինձ. — Ուրալ, Կաղակստան, Ալահվերդի և Ղափան (Հայաստանում):

Աղեր. — Խոհանոսցային ծովային աղ՝ Բասկունչակ և Կասպից լճերից:

Քարաղ. — Դոնեցաս, Նախիջևան: Ապատիտներ. — Խիբինի (Կիրովսկի) հանքերը: Կալիական աղեր. — Առլիակամսկում (Ուրալ):

Վուկի. — Ուրալում, Սիբիրում: ԽՍՀՄ-ի տեղը մյուս պետությունների մեջ կարիքավոր հանածոների պաշարի և արդյունահանման ասպարեզում:

4. ԽՍՀՄ-ի գետերն ու լճերը. — ԽՍՀՄ-ի գետերի մեծ մասի հարթ վայրերով հոսելու հանգամանքը և եղանից բղանձ առանձնահատկությունները՝ ձմռանը սաղցապատկերը, գարնանը՝ հորդանալը, ամռանը՝ ծանծաղանալը: Գետերի ողտագործումը՝ նավարկու-

թյան, ելեկտրիֆիկացիայի, վոռողման համար: Գետային ջրանցքներ:

Գետերը.— Հյուսիսային Դմինա, Պեչորա, Որ (Իրտիշ վտակով), Յենիսեյ (Անգարա վտակով), Լենա, Ամուր, Նեվա, Վոլխով, Սվեր, Դնեպր, Դոն, Վոլգա (Ոկա և Կամա վտակներով), Ուրալ, Ամուր-Դարիա, Սիբ-Դարիա, Քուռ (Ալազան, Առաջվա, Թարթար), Խրամ վտակներով, Խրամի վտակ Դեբեդը և նրա կազմվելը Չորագետից և Փամբակ գետից) Արաքս (Ախուրյան, Քանդու կամ Հրազդան):

Լճեր.— Լաղողա, Ոնեգա, Բասկունչակ, Կասպից, Արալյան, Բալխաչ, Բայկալ, Սևան:

Ջրանցքներ.— Հոկտեմբերյան (Մարինյան), Սպիտակ-Բալթիկ ծովյան (ընկ. Ստալինի անվան) ջրանցք, Վոլգա-Մոսկվա ջրանցք, Վոլգա-Դոն և Դոն-Դնեպր ջրանցքների նախագծերը: Եքսկուրսիա քարտեզի վրայի ջրանցքներով:

Հիդրոկայաններ.— Վոլխովի, Սվիրի, Դնեպրի, Զագես, Ռիոնգես, Յերգես, Չորագես, Քանաքեռգես և Սևան-Զանգու կասկադի նախագիծը: Անդարայի հիդրոկայանների նախագիծը:

Վոռողում.— Մեծ Վոլգայի պրոբլեմը: Անդրկովկասի և Միջին-Ասիայի ջրանցքները (Մուղանի, Սարդարաբատի և այլն):

5. Կլիման և հողաբուսական գտիները: ԽՍՀՄ-ի տեղադրված լինելը բարեխտոն և ցուրտ գոտիներում: Հյուսիսային Բևեռային ծովի, Մեծ, Ալտանտյան ովկիանոսների ու Միջերկրական ծովի աղդեցությունը ԽՍՀՄ-ի կլիմայի վրա:

ԽՍՀՄ-ի կլիմայի փոփոխվելը հյուսիս արևմուտքից հարավ-արևելք: արևելքում ցամաքային կլիմայի ուժեղանալը և մթնոլորտային տեղումների նվազումը: Միջին Ասիայի կիսաանապատները:

ԽՍՀՄ-ի մերձարևադարձային շրջանները:— Ղումի հարավային ծովափ, արևմտյան Անդրկովկաս (Աջարիա և Արևադիա), Լենկորանի ծովափ:

Կովկասյան լեռների նշանակությունը Անդրկովկասի կլիմայի համար: Արևելյան Անդրկովկասի տափաստանները (Մուղան) և ցամաքային կլիման: Հայկական լեռնաշխարհի ցամաքային կլիման պայմանավորող Փիղիկո-աշխարհագրական պայմանները:

ԽՍՀՄ-ի բնակչությունը՝ ԽՍՀՄ-ի բնակչության թիվն ու խտությունը համեմատած մյուս յերկրների հետ: Բնակչության բնական աճը համեմատած մյուս յերկրների հետ: այդ տարրերությունը պայմանավորող հանգամանքները: Բնակչության խտությունը ԽՍՀՄ-ի տարրերը մասերում չոկտեմբերից առաջ և հետո: դրա սոցիալ-տնտեսական պատճառները (արտադրողական ուժերի տեղաբաշխման ազդեցությունը):

ԽՍՀՄ-ի բնակչության աղղային կազմը: ԽՍՀՄ-ի քաղաքական բաժանումը: Միութենական հանրապետություններ և նրանց գլխավոր քաղաքները.— ՌՍՖԽՀ— Մոոկվա, Լենինգրադ, Գորկի, Խվանովովո, Ռուբրայինա-Կիեվ, Խարկով, Ողեսա, Բելոռուսիա— Մինսկ, Թուրքմենստան— Աշխաբադ, Ուզբեկատան— Տաշկենդ, Տաջիկստան— Ստալինաբադ, Անդրկովկաս— Թիֆլիս:

ԱՍՖԽՀ-ի մեջ մտնող հանրապետությունները:— Վրաստան, (Արխագիա, Աջարիա, Հարավային Ռուսիա), Ադրբեյջան— (Նախիջևան և Լեռնային Ղարաբաղը), Հայաստան և նրա շրջանները: Անդրկովկասի կազմի մեջ մտնող հանրապետությունների և ինքնավար շրջանների մայրաքաղաքները: Բնակչության թիվը ըստ առանձին հանրապետությունների: Անդրկովկասը վորպես ցարական Ռուսաստանի հետամնաց և չահագործվող մի գաղութամաս:

Անդրկովկասի միանդամայն վոխվելը խորհրդայնացումից հետո: Հետամնաց ազրարային յերկրից արդյունաբերական-ագրարային յերկրի վերածվելը:

Արդյունաբերության և գյուղատնտեսության վերելքը 1-ին հնդամյակում և 2-րդ հնդամյակում առաջին առաջին

տարիներում : Անդրկովկասի համբերը, արդյունաբերության ճյուղերը :

Անդրկովկասի գլխավոր գործարանները : Անտառապահական, բամբակամշակման, այգեղործական շրջանները : Անդրկովկասուր վորակես բամբակամշակման 2-րդ բազա (Միջին Ասիայից հետո) : Թեյի և ցիտրուսային (կիտրոն, նարինջ, մանդարին) բույսերի, ծխախոտի մշակումն Անդրկովկասում :

Անդրկովկասի յերկաթուղիները : Եքսկուրսիա քարտեղի վրա ԽՍՀՄ-ի յերկաթուղային գլխավոր ճանապարհներով : Ողային հաղորդակցությունը ԽՍՀՄ-ում և Անդրկովկասում :

9. ԱՇԽԱՄՀԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ

Իմպերիալիստական գլխավոր յերկրները : Գաղափար կապիտալիստական բարձր և միջակ զարգացման մակարդակի յերկրների մասին : Գաղութներ, կիտագաղութներ և կախյալ յերկրներ :

Փետուրյուններ .— ԱՄՆ (Նյու-Յորք, Վաշինգտոն), Անգլիա, (Լոնդոն, Մանչեստր), Ֆրանսիա (Փարիզ, Մարսել), Գերմանիա (Բեռլին Համբուրգ), Իտալիա, (Հռոմ, Նեապոլ), Ճապոնիա (Տոկիո), Ֆինլանդիա (Հելսինկի), Էստոնիա (Տալլին) Լատվիա (Ռիգա), Լիտվա (Կաունաս), Լեհաստան (Վարշավա), Ռումինիա (Բուխարեստ), Թյուրքիա (Անկարա), Պարսկաստան (Թավրիզ), Մոզամբիկ (Մուան-Բատոր), Ազգանաստան (Քաբուլ), Մոնղոլիա (Ուլան-Բատոր), Չինաստան (Չանգչին, Շանհայ) :

Համառոտ Փիզիկո-աշխարհագրական տեղեկություններ կապիտալիստական մեծ պետությունների խոչընոր գաղութների մասին : Յուրաքանչյուր պետությունների համառոտ կերպով կանդ առնել նրանց բնական հարստությունների, տնտեսության կարևորագույն ճյուղերի, կառավարության ձեի ու մեղ հետ ունեցած հարաբերությունների վրա :

ԲԱԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Հանրակրթական դպրոցում բնագիտությունն ուսանողներին պետք է տա բնական յերևույթների հիմնական փաստերը, պարզաբանի բնության զարգացման հիմնական որինաչափությունները և նրանց մոտեցնի՝ բնությունը ճշմարիտ և դիալեկտիկա-մատերիալիստուրեն ճանաչելուն : Միենույն ժամանակ բնագիտությունը հանրակրթական դպրոցում սովորողներին պետք է տա արտադրության գիտական հիմունքների մասին գիտելիքներ, գլխավորապես գյուղատնտեսության արտադրության մասին և մոտեցնի նրանց այն հասկացողությանը, թե ի՞նչպես բնությունը ճանաչելու հիման վրա, մենք կարողանում ենք նրան տիրապետել մեր սոցիալիստական շինարարության պրակտիկայում :

Հանրակրթական դպրոցներում բնագիտության այս խնդիրներն են գրված ներկա ծրագրի հիմքում և այն պետք է կատարվի դասավանդման պրակտիկայում :

Հանրակրթական դպրոցների բնագիտության ծրագիրն իր մեջ պարունակում է 4 բաժին, 1) տարրական գիտելիքներ Փիզիկայից և քիմիայից, 2) տարրական գիտելիքներ բույսերի կենսաբանությունից, 3) տարրական գիտելիքների կենդանիների կենսաբանությունից և 4) տարրական գիտելիքներ մարդու մարմնի մասին : Ծրագիրը կազմած է կոնսպեկտի ձևով, բաժանած և թեմաների և ցույց և տրված թեմաների համապատասխան փորձերն ու յեղակացությունները : Այդ բաներն արված են բնագիտության առարկան դասավանդող ուսուցչին ոժանդակելու նպատակով :

«Տարրական գիտելիքներ Փիզիկայից և քիմիայից» բաժնում գաղափար ե տրվում մարմնի և նյութի մասին, նյութի Փիզիկական և քիմիական փոփոխությունների մասին:

Նյութի փոփոխությունների մասին սովորողներին ծանոթացվում ե մի կողմից՝ լորրատորակոն ամենապարզ փորձերի միջոցով և մյուս կողմից՝ ըրջապատիքնության յերեռութների և արտադրական պրակտիկայի որինակներով։ Վերջինս առանձնապես խոշոր նշանակություն ունի գյուղական դպրոցների համար, վորոնք հնարավորություն չունեն բոլոր անհրաժեշտ փորձերը կատարելու։

Բնագիտության աշխատանքի հաջողության անհրաժեշտ պայմանն ե նյութի կոնկրետացումը։ Սովորողներին բնական յերեռութների այս կամ այն որինաչփությունները պարզաբանելիս, միևնույն ժամանակ անհրաժեշտ ե նրանց ցույց տալ, թե ի՞նչպես ենք այդ որինաչփությունների գիտելիքներն ոգտագործում մեր արտադրական գործունեյության մեջ։ Սովորողների այս կերպ ձեռք բերած գիտելիքները ավելի դորժական նշանակություն կունենան։

Առաջին բաժնի ամփոփման մեջ ուսանողներին տարրական հասկացողություն ե տեղում բնության հիմնական որենքների—նյութի և եներդիայի պահպանման որենքների մասին։ Այդ որենքների յուրացումը սովորողների կողմից բացառիկ կարևորություն ունի բնությունը գիտելեկարիկա—մատերիալիստորեն ճանաչելու միտքը զարդարելու համար և առանձնապես աշխատանքի պրակտիկայում անհրաժեշտ ե այդ բանին հասնել։

«Տարրական գիտելիքներ բույսերի կենսաբանությունից»—յերկրորդ բաժինն սկսվում ե «Բույսը՝ կենդանի որգանիզմ» թեմայով, վորի մշակման ժամանակ սովորողները կծանոթանան նյութի շարժման ավելի բարձր ձևին՝ կյանքին, մասնավորապես բույսերի կյանքին։ Այնուհետեւ առտիճառաբար, մի շաբթ թեմա-

ներում սիստեմատիկաբար ուսումնասիրում են կանաչ ծաղկավոր բույսերի՝ գլխավորապես կուլտուրական բույսերի, կազմությունն ու կյանքը։ Բույսերի կենսաբանության մշակումը պետք ե կատարել մի շարք պարզ և հետաքրքիլ փորձերով։ Այդ փորձերից շատերը կարելի յե կատարել մասսայական վորեե զպրոցում։ Դաստուն պետք ե հոգա իր ժամանակին ըրջապատիք բնությունից այդ փորձերի համար անհրաժեշտ պարագաներ հավաքելու (հողի նմուշներ, զանազան սերմեր, զանազան հետաքրքրական բույսեր և այլն)։ Զափազանց ցանկալի յե, նույնպես, գոնե ամենապրիմիտիվ կենդանի անկյուն ունենալ (ջրային բույսեր՝ ելողկա, վալիսներիս ջրով լի ապակե բանկայի մեջ։ սենյակում պահպղ բույսեր՝ տրաղեսկանցիա, զառնախոտ և այլն, տեղական թուփերի և ծառերի վոստեր ջրով լի չերի մեջ դրած և այլն)։ Այս նյութերը փորձերի համար խիստ կարելոր են։

Բույսերի կենսաբանության մշակումը կատարելիս հարկավոր ե առանձին ուշադրություն դարձնել այն յեղբակացությունների վրա, վորոնք մեր սոցիալիստական բուսաբուծության պրակտիկայի համար նշանակություն ունեն (պայքար բերքի համար, պայքար յերաշտի գեմ)։ Առանձնապես մեծ նշանակություն ունի այդ բանը գյուղական դպրոցներում, վորքան վոր այդ գիտելիքներն անմիջապես զինում են սովորողներին ագրոտեխնիկային արիթրավետելու համար։

Բույսերի կենսաբանության բաժնի յեղբակալման ժամանակ պետք ե հանել հակակրօնական յեղբակացություններ։ Այդ յեղբակացությունների հիմնական իմաստն այս պետք ե լինի՝ բույսի կյանքն ուսումնասիրելով, ճանաչում ենք նրա զարգացման որենքները և այդ որենքների հիման վրա բույսը աճեցնում ենք մեր սոցիալիստական գյուղատնտեսության պահանջների համապատասխան։ Այսպես ուրեմն մեր սոցիալիստական շինարարության պրակտիկան ես մենք պետք ե

ոգտագործենք վորպես հակակրոնական դաստիարակության ֆակտոր:

«Տարբական գիտելիքներ կենդանիների կենսաբանությունից» բաժինն իր մեջ ընդգրկում է կաթնասուն կենդանիների անատոմիայի և ֆիզիոլոգիայի բոլոր ամենագլխավոր հարցերը, այսինքն, գլխավորապես գյուղատնտեսական կենդանիների: Այս մասին մշակման ժամանակ մեծ նշանակություն ունի զանազան նկարների, անատոմիական մոդելների, նույնպես և բնական պրեպարատների գեմոնստրացիան (որինակ՝ սրտից, թոքերից և այլն): Այս պարագաների բացակայության դեպքում պետք է մաքսիմալ չափով ողտագործել գուստովի համապատասխան նկարները:

Ֆիզիոլոգիական հարցերը մշակելիս հարկավոր է, գոնե մինիմում փորձեց զնելն ապահովել (որինակ, փորձեր մկների վրա, զորտի թաթի ներփերի վրա և այլն): Ֆիզիոլոգիական շատ փորձերի համար զորտեր են հարկավոր, պետք և աշնանից նրանցից անհրաժեշտ քանակությամբ հավաքել և մի վորեեւ տեղ խոնավ արկղում պահել: Կենդանու մարմնի ընդհանուր պլանին ծանոթանալու համար ել զորտեր են պետք, ինչպես նաև առանձին որդաններն ուսումնասիրելու ժամանակ:

Կենդանիների կենսաբանության ուսումնասիրությունը պետք է սերտորեն կազել կենդանաբուծության պրակտիկայի հետ: Որինակ, սննդառություն, կենդանիների բազմացման հարցերը սովորելիս, անհրաժեշտ է սովորողներին բացատրել, թե ի՞նչպես դիտության յեղակացությունները զործադրում ենք սոցիալիստական անասնաբուծության պրակտիկայի մեջ: Այս բանն առանձնապես մեծ նշանակություն ունի գյուղական գպրոցներում, վորքան վոր այդ գիտելիքներն անհրաժեշտ են զոռությունիկային գիտակցորեն տիրապետելու համար:

«Տարբական գիտելիքներ կենդանիների կենսաբանությունից» բաժնի մշակումը վերջանում է «Բույսերը և կենդանիները» թեմայով: Տվյալ թեմայի մեջ այն

ընդհանուր պրոցեսներն են մատնանշվում, վորոնք թերույսերի և թե կենդանիների համար եյական են— նյութերի փոխանակությունը, վոր բոլոր կենդան եյակների հիմնական հատկանիշն է: Միենույն ժամանակ պարզաբանվում են բույսերի և կենդանիների մեջ կատարվող նյութերի փոխանակության առանձնահատկությունները: Այնուհետև քննվում է բույսերի և կենդանիների փոխհարաբերությունների խնդիրը բնության և գյուղատնտեսության մեջ: Այսպես ուրեմն, տվյալ թեման, թե «Տարբական գիտելիքներ կենդանիների կենսաբանությունից» բաժնի և թե նրան նախորդող «Տարբական գիտելիքներ բույսերի կենսաբանությունից» բաժնի— յեզրափակումն է:

Մարդու վերաբերյալ բաժինը սկսվում է մարդու մարմնի գիտության՝ ծավան և զարգացման համառոտ պատմական տեղեկություններով: Բնագիտության դասավանդման ժամանակ գիտության պատմության տրվյալների ներածությունը մեթոդուոգիական տեսակետից չափազանց ցանկալի յե և մեթոդական տեսակետից Հետաքրքրական, իսկ մարդկային մարմնի գիտության պատմության տվյալների մասին ներածություն անելը ցանկալի յե առավել ևս այն պատճառով, մոռ այդ որինակների վրա կարելի յե ամենայն համոզեցուցիչ փաստերով ցույց տալ, թե կրոնն ու յեկեղեցին վորպիսի գաժան թշնամիներ են յեղել գիտության գեմ: Դա հակարոնական դաստիարակության համար հարուստ նյութ կտա:

Մարդու անատոմիան և Փիզիոլոգիան պետք և չափազանց համառոտակի մշակել, վորքան վոր հիմնական ամբողջ նյութն արդեն մշակված է «Տարբական գիտելիքներ կենդանիների կենսաբանությունից» նախորդ բաժնում: Որդանների ըուրաքանչյուր սիստեմի մասին խոսելիս, պետք է մատնացույց անել մարդու և կենդանիների, առանձնապես՝ կաթնասունների մարմնի կազմության և նրանց որգանների ֆունկցիաների նմանությունը: Այդ ժամանակ անպատճառ պետք է նշել

մարդու անատոմիա-Փիզիոլոգիական առանձնահատ-կությունները (ուղղաձիգ քայլվածքը, գանդուղեղի բարձր զարգացումը)։ Առանձին ուշադրություն պետք է դարձնել մարդուն կենդանիներից տարբերվելու այն գլխավոր հատկանիշների վրա— ինչպիսին են— աշխատանքը, դրծիքներ պատրաստել իմանալը և գիտակ-ցական հասարակական կենցաղի պայմանավորումը։

Կենդանիների և մարդու անատոմիական և ֆիզիո-լոգիական հարցերի մշակումը պետք է տա նյութի այն կոնկրետ մինիմումը, վորն անհրաժեշտ է, զոնե ամենատարական ձևով պարզաբանելու մատերիալիստական և հակակրօնական դաստիարակության համար ամենախոշոր նշանակություն ունեցող՝ մարդու ծագման խնդիրը։

Այս հարցն ուսումնասիրելիս պետք է գիտության ուսուցումը հակադրել կրօնի «ուսմունքին» այնպես, վոր յերեան հանվի կրօնական քարտզի անհեթեթությունն ու վնասակարությունը՝ մարդու ծագումն աստ-վածային ստեղծադորդությանը վերադրելը։

Այդ ժամանակ պետք է փաստեր բերել համեմա-տական անատոմիայից, սաղմարանությունից և հնեա-բանությունից, հետո բացատրել աշխատանքի դերը հնագույն մարդանման կազիկների մարդայնացման պրոցեսում։ Այդ հարցում մենք գտնվում ենք բիոլո-գիական և սոցիալական սահմանագլխում, վորը դասա-վանդման պրակտիկայում պետք է հստակորեն հասկա-նալ, վորովհետեւ դա ամենաանհրաժեշտ պարմանն է մարդու ծագման խնդիրը մեթոդուգիապես ճիշտ լու-սաբանելու համար։

Այսպես ուրեմն. բնագիտության ուսուցումը նյու-թի շարժման Փիզիկական ձերից սկսելով՝ մենք մոտե-նում ենք նյութի շարժման բարձր և սոցիալական ձևին։

Սույն ծրագիրն ընդհանուր է թե՛ քաղաքային և թե՛ գյուղական գպրոցների համար։ Գյուղական դըմ-րոցներում ծրագիրն անցնում էն 2 տարում՝ Ա և ԱՌ

դասարաններում, իսկ քաղաքային դպրոցներում միայն 1 տարում՝ Ա դասարանում, ըստ վորում գյուղական դպրոցների Ա դասարանի ծրագիրը քաղաքային դպրոց-ներում անցնում են Ա դարասանի Ա կիսամյակում, իսկ ԱՌ դասարանի ծրագիրը՝ Ա դասարանի Բ կիսամ-յակում։

Ուսման աշխատանքի ռացիոնալ կազմակերպման մեջ բացառապես խոշոր նշանակություն ունի դասա-տուի դասին պատրաստի լինելը։ Բոլորովին, անթույ-րատրելի յե, վոր ուսուցիչը դպրոց դա անդատրաստ։ Այս կամ այն թեման մշակելու համար պատրաստվելիս անհրաժեշտ է ուշադիր կերպով քննել ծրագիրը, վոր-պեսզի իրեն համար պարզ լինի, թե տվյալ թեման մշակելիս ինչ գիտելիքներ ե պահանջվում ուալ։ Ծրա-գրի պահանջները պարզաբանելով միայն կարելի յե համապատասխան ծրագրի թեմայի մշակման պլանը կազմել։ Պլան կազմելիս անհրաժեշտ է ունեցած մեթո-դական և ուսման ձեռնարկները, առանձնապես՝ հան-րակրթական դպրոցների համար հրատարակված դա-ստգրքերն ոգտագործել։ Պլանը կարող է այս կամ այն չափով կրծատ կամ մանրամասն լինել, վոր կախված է դասատվի պահանջից։ Այսպես որինակ, փորձված դա-ստուն կարող է դասի կրծատ պլանով ել բավարար-վել, իսկ սկսնակ դասատուի համար պահանջվում է ա-մելի մանրամասն պլան։ Պլանի մեջ պետք է ցույց տըր-ված լինի՝ 1) թեմայի անունը, 2) տվյալ թեման մշու-կերու համար հատկագիրիք ժամանակը, 3) թեմայի հիմնական հարցերը, 4) մշակման մեթոդների ցուցում-ները (գրելոց, այս ինչ նկարների դեմոնստրացիա, այս ինչ յեղբակացություն գրելը և այլն), 5) ուսումնական սարքավորումը, վոր անհրաժեշտ է տվյալ թեման մշակելու համար։

Թեմայի մշակումը պետք է կատարել կազմած պլա-նի համաձայն։

Թեմայի մշակմանն անցնելիս, դասատուն նախ և առաջ պետք է սովորողներին բացատրի վոր շակի, թե

ի՞նչ են նրանք սովորելու։ Դրա համար հարկավոր և սովորողներին բացատրել տվյալ թեմայի կազմը նախորդ թեմայի կամ թեմաների հետ, վոր շատ անհրաժեշտ է դասընթացը սիստեմատիկորեն մշակելու համար։

Դրանից հետո դասատուն անցնում է թեմայի բովանդակության սիստեմատիկ դասավանդմանը։ Այս աշխատանքի մեջ դասատությունը, գլխավորապես, պահանջվում է գիտական վերլուծում։ Դասատուն պետք է ձգտի, վոր տվյալ գիտությունը ճիշտ մեկնարանի և ամենեւին թույլ չտա ինչ-վոր «իրենից հնարած»-ի։ Սրան հետեւմ ե յերկրորդ պահանջը։ Թե ըստ բովանդակության և թե ըստ ձեւի մեկնաբանությունը պետք է բոլորովին մատչելի լինի սովորողների զարգացման և ըմունան մակարդակին։ Զափազանց կարեռը և այդ ժամանակ հաշվի առնել և հենվել կենսական և արտադրական այն փորձի վրա, վոր ունեն մեր հասակավոր ուսանողները։ այս հիման վրա հաղորդած գիտություններն ավելի հեշտ և ամենահասատուն կյուրացվեն սովորողների կողմից և ավելի խոշոր նշանակություն կունենան։

Մեկնարանություն շատ հաճախ դորձածական մեթոդներն են դասատուի պատմելը, հաճախ տարրական դրույցը կամ ուղղակի զրույցը, և թե նյութն ավելի ծանօթ և սովորողներին։ Բայց սիստ կիմնը սահմանափակվել միայն դասավանդման աշդպիսի բանավոր մեթոդներով։ Բոլորովին անհրաժեշտ է պրակտիկայի մեջ ավելի լայնորեն կիրառել դիտողական դասավանդումը և ամենահասարակ հետազոտական աշխատանքները։

Իրազնական պարագաներից առաջին տեղը պիտի տալ պատի նկարներին, վորքան վոր նրանք շատ հաճախ անհրաժեշտ են բնադիտության դասավանդման համար։ Ներկայումս այդպիսի նկարներ հրատարակվում են։ Նկարների բացակայության դեպքում, վորոշ չափով նրանց կարելի յե փոխարինել դասագրքի համապատասխան նկարներով։ Հարկավոր ե նաև, վոր դա-

սատուն հաճախ գծագրի այս կամ այն որյեկտը (որինակ, բուսական և կենդանական բջիջ, արյան շրջանառության սիստեմն և այլն) գրատախոտակի վռա։

Բացի տպագրված իրազնական պարագաներից, վորտեղ այդ հնարավորությունը կա, պետք ե ոգտագործել նաև ծավալային իրազնական պարագաներ (որինակ, սրտի մողելը, գանգուղեղի մողելը և այլն)։ Պատմելու կամ զրույցի ժամանակ իրազնական պարագաների ցուցադրումը դասավանդությունն զգալիորեն կաշխատեցնի։

Զանազան իրազնական պարագաների կողքին լայն չափով պիտի ոգտագործել բնական որյեկտները։ Իսկ այդ բանը կախված է արգեն, հենց իրեն, դասասունի նախաձեռնությունից։ Բնական որյեկտները լայն չափով ոգտագործել կարելի յե, առանձնապես, բույսերի կենսաբանություն դասընթացն անցնելիս։ Այսպես, որինակ, խտուտիկի և յեզան-լեզվի կենդանի և չորացրած նմուշները դասարան բերելը՝ կարող է արմատների կազմությունը սովորեցնելու համար ամենագեղեցիկ պարագան ծառայել (առանցքային և փնջային արմատներ) և այլն։ Յեվ վո՞րքան այդպիսի նյութ կա մեր շուրջը։ Միայն հարկավոր է ժամանակին նրանց հավաքել։

Բնագիտության դասավանդման մեջ առանձնապես մեծ նշանակություն ունի փորձը։ Իհարկե, դպրոցի պրակտիկայում ամենից շատ դեմոնստրատիվ փորձերն են իրականացնելի, այսինքն, այն փորձերը, վորոնք դասատուն և ցուցադրում սովորողներին։ Բայց բավականին լավ սարքավորված դպրոցի պայմաններում, չափազանց ցանկալի յե նաև այն փորձերը, վորոնք սովորողները՝ իրենք են կատարում։ Ցուրաքանչյուր կատարելիք փորձի ժամանակակի, ամենից առաջ, անհրաժեշտ ե, վոր դասատուն սովորողներին բացատրի, թե տվյալ փորձի հիման վրա՝ նա ինչ ինդիր է ուղում լուծել։

Հակառակ դեպքում, սովորողները փորձին կվերա-

բերվեն, վորպես ֆոկուսի, վոր, ի հարկե, վորձը շատ
բան կկորցնի մանկավարժական տեսակետից։ Փորձի
պրոցեսում հարկավոր ե կատարված յերեռոյթը վոր-
պես դիտելու միջոց կազմակերպել, նրանց ուշադրու-
թյունը կենտրոնացնելով, գլխավորապես, հիմնականի
վրա, ձգտելով հասնել այն բանին, վոր սովորողներն,
իրենք, ինքնուրույնաբար այդ վորձի հիման վրա պա-
տասխանեն այն հարցին, վոր տվյալ վորձով վճռվելու
յե։ Յուրաքանչյուր փորձից հետո պետք ե յեզրակացու-
թյուն հանել։ Փորձերն ի հարկե, սարքավորում են պա-
հանջում և լաբորատորիական սարքավորման մի քանի
հատուկ իրեր անհրաժեշտ ե գնել։ Բայց տարրական
բնագիտության դասընթացում պատահող փորձերի մեծ
մասը կարելի յե կատարել տնային ամենապրիմիտիվ
սարքավորումով։ Պետք ե ամեն միջոց ստեղծ ել դպրոցի
ինքնասարքավորման համար։

Այս կամ այն հարցի մշակման վերջում, ինչ մե-
թուղիվ ել վոր նա իրականացված լինի, հարկավոր ե,
անպատճառ յեզրափակումներ անել։ Նկատի ունենալով.
վոր սովորողները դեռևս գրի առնելու տեխնիկային
թույլ են տիրապետում և գրավոր յեզրափակումներ
անելը նրանցից շատ ժամանակ կլիմի, միայն ամենա-
կարևոր յեզրափակումները պետք ե համառոտակի գրել։
Այսպես որինակ, կոպիտ կերպով հաշված, մի դասոի
ընթացքում 8—10 տողից ավելի չպետք ե գրել։ Դրա
համար դասատուին խորհուրդ ենք տալիս այդ յեզրա-
փակումները նախորոք գրատախտակի վրա գրել։ Սա-
կայն գրելուց բոլորովին հրաժարվել չեն կարելի։ Յեզ-
րափակումներ գրելը սովորողների մեջ ամենակարևոր
գիտելիքները կամրացնի և նրանց կիշարժեցնի վորոշ
դիսցիպլինի։

Աշխատանքի մյուս միջոցների կողքին կարելի յե
նաև դասագրքից ընթերցումը կատարել սովորողների
միջոցով։ Բայց դասագրքից ընթերցելը, յերբեք, և
վո՛չ մի գեպքում, դասատուն չպետք ե դորձադրի,
վորպես առարկան մեկնաբանելու մեթոդ, այդ պատ-

ճառով դասագրքի ընթերցումը պետք ե կատարել զա-
սատուի մեկնաբանելուց հետո, մշակած նյութին ամ-
բազնդելու կարգով։ Այսպես ուրեմն։ դպրոցում դա-
սագրքի ընթերցումը պետք ե զգալիորեն սահմանա-
փակվի և փոխադրվի բացառապես տանը կատարելու։

Բնագիտության աշխատանքի մեջ վորոշ տեղ պիտի
հատկացվի եքսկուրսիաներին՝ դեպի բնություն, թան-
գարան և արտադրություն (Փարբիկա, դրույտան,
խորհունտեսություն, կոլտնտեսություն)։ Վորպեսզի
եքսկուրսիան լավ արդյունք տա, անհրաժեշտ ե, վոր
դասատուն նախապես պատրաստված լինի։ Դասատոււ
անձամբ պետք ե ծանոթանա եքսկուրսիայի տեղին,
մշակի նրա պլանը, սովորողների առանձին խմբակների
համար առաջադրություններ կազմի։

Յուրաքանչյուր եքսկուրսիա պետք ե կատարվի վո-
րոշ թեմայի համաձայն։ Եքսկուրսիայից հետո ավյալ
թեմայի մշակման յեզրակացություններին հանդուր
ընդհանրացումների զրոյց պետք ե կազմակերպել։

Ուսուցման աշխատանքի պրոցեսում դասատուն
պետք ե սովորողների յուրացման հաշվառում կատարի։
Հաշվառումը կատարվում ե ուսանողների ամենորյա-
ռուման աշխատանքը դիտելու և քննության ընթարկե-
լու միջոցով, նաև թեմայի յուրաքանչյուր մշակված
գրուպայի չուրջն ուսանողներին հատուկ հարց ու փոր-
ձի յենթարկելով։ Այս յերեք ավյալների հիման վրա
դասատուն յեզրակացություն կհանի սովորողների ա-
ռաջադիմության մասին և կտա նրանց համառոտ բնու-
թագիրը։ Սովորողների առաջադիմության գնահատա-
կանը նաև դասատույի նրանց հետ կատարած մանկա-
վարժական աշխատանքի գնահատականն ե։

Մ Ր Ա Գ Ի Բ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ Ա ԴԱՍԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ Ա ԴԱՍԱՐԱՆ
Ա. ԿԻՍԱՄՑԱԿ

Ա. ՏԱՐՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՖԻԶԻԿԱՅԻՑ ՅԵՎ
ՔԻՄԻԱՅԻՑԻՑ

Ներածական գրույց

Բնագիտությունը կապիտալիստական յերկրներում և ԽՍՀՄ-ում: Բնագիտությունն ի սպաս սոցիալիստական շինարարության:

Բնագիտությունն ուսումնասիրելու նշանակությունը բնությունը ճիշտ հասկանալու և տեխնիկային տէրապետելու համար:

Սովորողներին ծանոթացնել հանրակրթական դրագույներում բնագիտության ուսումնական աշխատանքի պլաններին և կազմակերպմանը:

1. ՆՅՈՒԹԵՐԻ ԶԵՐՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հասկացողություն մարմնի և նյութի մասին: Հասկացողություն պինդ, հեղուկ և գազային մարմինների մասին: Մարմինների բնդարձակվելը ջերմությունից և սեղմվելը՝ ցրտից: Փոքանք՝ պնդեն դրամի, ներկած ջրի և ողի վրա: Որինակներ տեխնիկայից՝ յերկաթուղու ռելսերի տեղափորումը, անիվներին յերկաթե շիներ հաղցնելը և այլն: Զրի՝ ջերմությունից ընդարձակվելու ցրտից սառչելու առանձնահատկությունները: Փակ չեղ ջուրը սառցնելու փորձ: Որինակներ տեխնիկայից՝ ջրախողովակների, ավտոմոբիլների ուղղիսորների, տրակտորների ուղիստորների տրաքվելը՝ նրանց մեջ ջուրը սառչելու ժամանակ: Նյութերի մեջ վիճակից մյուսին փոխելը (ջրի որինակի վրա): Հասկացողությունը բարեխառնության և ջերմաչափի մասին: Զեր-

մաչափով բարեխառնությունը չափելու վարժություններ:

Հասկացողություն շոգու ձնշման և տեխնիկայի մեջ շոգու ոգտագործելու մասին:

Շոգու ձնշումը ցուցադրող փորձ: Հասկացողություն մանումետրի մասին:

Հասկացողություն մթնոլորտային ձնշման մասին: Մթնոլորտային ձնշումը ցուցադրող փորձեր: Հասկացողություն բարոմետրի մասին:

Հասկացողություն նյութի մոլեկուլյար կառուցվածքի մասին: Ինչով բացատրել նյութերի ջերմացին փոփոխությունները: Զերմությունը նյութ չե, այլ նյութի մոլեկուլների շարժման չափը:

2. ՆՅՈՒԹԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հասկացողություն նյութերի Փիզիկական և քիմիական փոփոխությունների մասին: Հասկացողություն համասեռ և վոչ համասեռ նյութերի մասին:

Հասկացողություն քիմիական ռեակցիաների մասին, վորոնց ժամանակ փոխվում և նյութերի բաղադրությունը: Միացման ռեակցիա՝ ծծմբական յերկաթստանալու որինակի վրա: Տարրալուծման ռեակցիա: Մնդիկ ոքսիդի տարրալուծման փորձ ջերմացներու միջոցով: Քիմիական ռեակցիաների որինակներ տեխնիկայից և բնության մեջ: Պարզ և բարդ նյութերի մասին հասկացողություն (նախորդ փորձերի ժամանակ ծանոթացած նյութերի որինակների վրա):

Ոդ. — Ոդի մեջ գոնկած թթվածնի (^{1/5} ծավալ) և աղոտի (^{4/5} ծավալ) տարրերությունը ցույց տվող փորձ: Թթվածին, նրա հատկությունները և նշանակությունը բնության մեջ և նրա ոգտագործումը տեխնիկայի (ավտոմոբիլն զողումն) և բժշկականության մեջ: Թթվածին ստանալու փորձ (բերտուկույան աղը մանգանի կրկնոքսիդի հետ) և նրա հատկությունները հետազոտել (այրման նպաստելը): Աղոտ, նրա հատկությունը և ոգտա-

գործումը տեխնիկայի մեջ (պարարտանյութեր և պայմանագիրներ պատրաստելը):

Սելիտրան յերկաթի խարտվածքի հետ խառնելով և տաքացնելով աղոտ ստանալու փորձ կատարել և հետազոտել նրա հատկությունները: (Այրմանը չի նպաստում):

Ածխաթթու գաղ, նրա հատկությունները, նշանակությունը բնության մեջ և ոգտագործումը տեխնիկայի մեջ (հրշեջներ): Աղաթթվի ներդործությամբ մարմարի կամ կավճի վրա ստանալ ածխաթթու գաղ և հետազոտել նրա հատկանիշները. (այրմանը չի նպաստում. կրաշուրը ազդարում է):

Զուր.— Բնական ջուրը և նրա գտումը պղտորությունից. լուծվող նյութեր: Փորձեր՝ քամել և թորել. հետազոտել քամած և թորած ջրի հատկությունները: Ջրի զտման մի քանի յեղանակների գործադրումը տեխնիկայի մեջ (ջրամատակարարական կայաններում ջրի ֆիլտրացիա և ջրի թորումը գեղատներում): Ջրի միջից լուծված նյութերի հանելը, աղի լուծույթը գոլորշիացնելու փորձ: Գոլորշիացնելու գործադրումը տեխնիկայի մեջ (աղ ստանալը):

Ջրի բաղադրությունը՝ ջուրը ջրածնի և թթվածնի միացությունն է: Ջրածնը և նրա հատկությունները: Ջրածնի ողտագործումը տեխնիկայի մեջ (գիրիժարլաշինարարության մեջ և այլն):

Ցինկի վրա ջրախառն ծծմբական թթվով ներդործելու միջոցով ստանալ ջրածնի և հետազոտել նրա հատկանիշները (այրվում է): Ջրածնն այրելով ստանալ ջուր:

3. ՆՅՈՒԹԻ ՑԵՎ ԵՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՐԵՆՔՆ

Շրջապատի կոնկրետ որինակների վրա հասկացողություն տալ նյութի պահպանման մասին: Փորձով ապացուցել, վոր այրվող նյութը (որինակ սպիրտը) չի կորչում, այլ վերածվում է ուրիշ նյութերի:

Ծարժվող ջրի և քամու որինակներով հասկացողություն տալ մեխանիկական եներգիայի մասին: Հասկացողություն եներգիայի մյուս տեսակների մասին և մեկ եներգիայից մյուսին անցնելու մասին (տեխնիկայից ամենապարզ որինակների վրա): Հասկացողություն եներգիայի փոխնման և պահպանման որենքի մասին: Նյութի և եներգիայի պահպանման որենքի նշանակությունը արտադրական գործունեյության մեջ: Մեր նվաճումներն ու խնդիրները ելեկտրիֆիկացիայի բնագավառում ԽՍՀՄ-ի մեջ:

ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԲՈՒՑՍԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներածական գրույց

Բույսերի կենսաբանությունն այն գիտությունն է, վոր ուսումնասիրում և բույսերի կյանքն ու կազմությունը: Բույսերի կենսաբանությունը բուսաբուծության գիտական հիմքն է: Մեր գլխագործ կույտուրական բույսերը՝ հացահատիկային, տեխնիկական և այլն: Հասկացողություն կուլտուրական բույսերի ծագման մասին: Սոցիալիստական բուսաբուծության խնդիրները յերկրորդ հնգամյակում: Բույսերի կենսաբանության գերը բերքի պայքարում:

Բույսերի կենսաբանությունը սովորելու նշանակությունը բնությունը ճիշտ հասկանալու և աղբոտեխնիկային տիրապետելու տեսակետից:

1. ԲՈՒՑՍԵՐ—ԿԵՆԴԱԿՆԻ ՈՐԳԱՆԻՉԱՄ

Բույսի կազմությունը՝ բույսի որդանները (արմատ, տերև, ցողուն, ծաղիկ) և դրանց նշանակությունը:

Բույսի բջջային կառուցվածքը. հասկացողություն բուսական բջջի, նրա կազմության և բազմացման մասին:

Յուցադրում՝ տոմատի փափուկ մասի և սոխի թաղանթի բջիջները մանրադիտակի տակ:

Հասկացողություն բույսի քիմիական բաղադրության մասին՝ ջուր, որգանական նյութեր, մոխիր: Գլխավոր որգանական նյութերը՝ սպիտակուցներ, ձարպեր և ածխաջրեր, ոսլա, շաքար, բջջաթաղանթ: Փորձեր՝ 1) ալյուրից սոսնձանյութ ստանալ. 2) սերմերի մեջ ոսլա հայտնաբերել. 3) քաղցրահամ պտուղների մեջ շաքար հայտնաբերել. 4) յուղատու սերմերի մեջ ձարպեր հայտնաբերել: Հասկացողություն այն կենսական պրոցեսների մասին, վորոնք կատարվում են բույսերի մեջ սննդառություն, չնչառություն, աճում, բազմացում:

Յեզրակացություն.— Բույսի, վորոնք կենդանի որգանիզմի հիմնական տարբերությունն անկենդան բնության մարմիններից:

2. ՍԵՐՄ ՅԵՎ ՆԻԱ. ԾԼՈՒՄԸ

Սերմի կազմությունը. սաղմ, սննդանյութերի պաշարի կուտակումը: Սերմի ծլման անհրաժեշտ պայմանները՝ ջուր, ող, ջերմություն: Հասկացողություն ծլման մասին: Փորձեր սերմերի ծլունակությունը վորոշելու համար: Ծիլի աճումը:

Ծիլի սննդառությունը սերմի նյութերի պաշարի հաշվին: Ծլող սերմերի չնչառությունը: Փորձ: Ինչպիսի սերմեր պետք է ցանել լավ բերք ստանալու համար: Հասկացողություն գարնայնացման և աշնայնացման մասին:

3. ԲՈՒԹՍԻ ՍՆՈՒՆԴԸ ՀՈՂԻՑ

Միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի արմատի կազմությունը: Յուցադրել նմուշներ: Արմատային մազիկները, վորպես բույսի սննդառության որգաններ հողից սնունդ վերցնելու համար: Յորենի ծելերի վրա ցուցադրել արմատային մազիկները: Հողի կազմությունը փատահող (հումուս), ավագ, կավ, աղեր: Բույսը արմա-

տային մազիկներով ի՞նչ է վերցնում հողից: Լորազգե բույսերի առանձնահատկությունները մթնոլորտի ազուր յուրացնելու տեսակետից: Յուցադրել լորազգե բույսերի արմատների վրա դանված պալարները: Լորազգի բույսերի նշանակությունը ցանքաշղանառության մեջ:

Բույսի հողից սննդառության ուսումնասիրությունը վորպես գիտական հիմունք պարարտացման պրակտիկայի համար: Հողի պարարտացման նշանակությունը բերքատվության բարձրացման համար: Գյուղատնտեսության քիմիզացիայի խնդիրները յերկրորդ հնդամակում:

4. ԲՈՒԹՍԻ ՍՆՈՒՆԴԸ ՅՈՒԽԱՅԻՑ ՈՂԻՑ

Մթնոլորտի ածխաթթու գազի ոգտագործումը բույսի կողմից: Տերևի կազմությունը, հերձանցքները: Տերևի փափուկ մասերի բջիջներում քլորոֆիլի հատիկները: Մանրադիտակով ցուցադրել ելույեայի տերևեիկը: Ածխաթթու գազի քայլքայումը կանաչ բույսերի մեջ լույսի տակ և թթվածնի արտաշնչումը: Նույն յերեսույթը փորձով ցուցադրել: Կանաչ բույսի մեջ ոսլայի առաջանալի ածխաթթու գազի և ջրի բաղադրիչ տարրերից: Այդ յերեսույթի ցուցադրումը փորձով: Հասկացողություն կանաչ բույսերի սննդառության մասին:

Յեզրակացություն.— Հանքային նյութերից որգանական նյութեր գոյացնելը վորպես կանաչ բույսերի ստանձնահատկություն: Բուսաբուծությունը վորպես ստեղծագործող արդյունագործություն:

5. ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺՈՒՄԸ ԲՈՒԹՍԻ ՄԵՋ

Ցողունի կազմությունը:— Կեղե, կամբիում, բնափայտ, միջուկ:

Որգանական նյութերի շարժումը տերևներից դեպի արմատները:

Վոստի ողակման փորձը։ Ուլան շաքարի փոխվելը և ընդհակառակը։ նյութերի պաշարի կուտակումը բույսի մեջ (արմատներում, պալարներում և այլն)։

Զրի և հանքային նյութերի շարժումը բույսի արմատից դեպի տերեւ։ Գունավոր լուծույթի բարձրանալը բնափայտի անոթներով, դեպի վոստերի տերեները (փորձով ցույց տալ)։

Զրի գոլորչիացումը բույսի կողմից և նրա նշանակությունը բույսի կյանքի համար։ Կատարել այնպիսի փորձեր, վորոնք ցույց տան ջրի գոլորչացիումը բույսի միջով։

Յերաշտի դեմ պայքարելու խնդիրները յերկրորդամյակում։

6. ԲՈՒՑՍԵՐԻ ՇՆՋԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Շնչառության պլոցեսի ժամանակ բույսի կողմից թթվածնի ոգտագործումը և ածխաթթու գազի արտաշնչումը։ Շնչառության հատուկ որգանների բացակայությունը բույսերի մեջ։ Փորձեր շնչառությունը ցույց տալու համար՝ տերեների (մութ տեղում), ծաղիկների, արմատների և այլ որգանների վրա։ Շնչառության և սննդառության պլոցեսների ժամանակ ողից գազափառանակման յերեսույթների տարբերությունը։

7. ԲՈՒՑՍԵՐԻ ԲԱՋՄԱՑՈՒՄԸ

Ծաղիկը, վորպես բույսերի բազմացման որգան։ Ծաղիկի կազմությունը, նրա գլխավոր մասերը՝ առենքը և վարսանդ։ Փոշոտում։ Քամու և միջատների դերը բույսերի փոշոտման մեջ։ Հասկացողություն բեղմնավորության մասին։ Սերմերի և պտուղների գոյացումը։ Արհևտական փոշոտում և նրա նշանակությունը նոր տեսակի բույսեր առաջացնելու դորձում։ Միջուրինի գլխավոր նվաճումները և սելեկցիոն կայանները։ Ծաղկավոր բույսերի վեգետացիոն բազմացման մասին հասկացողություն (անդալիս, վոստերով,

պալարներով, կոճղեղներով և այլն) և դրա նշանակությունը գյուղատնտեսության պրակտիկայի մեջ։ Հասկացողություն անծաղիկ բույսերի մասին։

8. ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բույսի կյանքի շրջանը՝ սերմի զարգացումից մինչև սերմ։ Բույսի կյանքի ճանաչումը, վորպես անհրաժեշտ պայման բույսերի կյանքը ղեկավարելու համար սոցիալիստական գյուղատնտեսության մեջ։ Սոցիալիստական գյուղատնտեսության պրակտիկան, վորպես հաստատումն մեր գիտելիքների ճշմարտության։ Գիտության ճշմարիտ լինելը և կրօնի անհեթհեթությունը։ Գիտությանը տիրապետելու և կրօնի դեմ պայքարելու անհրաժեշտությունը, վորպես արգելակի՝ բերքի համար մղվելիք պայքարում։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑԵՐԻ III ԴԱՍԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑԵՐԻ II ԴԱՍԱՐԱՆ Բ. ԿԻՍԱՄՅՅԱԿ
Ա. ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ
ԿԵՆԴԱԿԱՆԻՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
Ներածություն

Կենդանիների կենսաբանությունը, կենդանական որգանիզմի կազմության և կյանքի գիտությունն ե։ Հասկացողություն բարձր և ստորին կարգի կենդանիների մասին։ Հասկացողություն կենդանական որգանիզմի որգանների և որգանների համակարգությունների մասին։ Կենդանիների կենսաբանությունը կենդանաբուծության գիտական հիմքն ե։ Հասկացողություն ընտանի կենդանիների ծագման մասին։ Սոցիալիստական անասնաբուծության խնդիրները յերկրորդ հնդամյակում։ Կենդանիների կենսաբանության դերը անասնաբուծության զարգացման մեջ։

Կենդանիների կենսաբանության ուսումնասիրու-

թյան նշանակությունը բնության ձիչտ հասկանալու և զոռոտեխնիկային տիրապետելու տեսակետից:

1. ՇԱՐԺՈՂ ԱՊԱՐԱՏԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կմախքը և մկանները կենդանու մարմնի շարժող ապարատն եւ: Ցուցադրել բնական կմախք կամ նկարը: Կմախքի նշանակությունը, վորպես մարմնի նեցուկ և ներքին որգանները պաշտպանելու միջոց: Հասկացողություն վողնաշարավոր և անողնաշարավոր կենդանիների մասին: Կմախքի կազմության պլանը: Մկանների ամրացումը վոսկորներին: Կծկումները, վորպես մկանների առանձնահատկություն: Փորձ գորտի մկանների վրա: Աշխատանքի համար ոպտագործվող անասունների առանձնահատկությունները:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԵՐԱԿՐԵԼԲ

Կերակուրը, վորպես որգանիզմի կենսագործունեյության համար անհրաժեշտ նյութերի և եներգիայի աղբյուր: Կերերի բաղադրությունը՝ սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր և այլն: Ցուցադրել քարտեզներ և համաքածուներ:

Մարսողության ապարատի կազմությունը և նրա առանձնահատկությունները զանազան կենդանիների մեջ: Ցուցադրել նկարներով: Կերակրի փոփոխությունը բերանի խոռոչում, ստամոքսում և աղիքների մեջ: Հասկացողություն մարսողական հյութերի մասին:

Մարմված նյութերի ծծումն աղիքներում և նրանց բաշխումը արյան միջոցով կենդանու մարմնի զանազան մասերին: Կերակրանյութերի փոխարկվելը կենդանու մարմնի նյութերին:

Սպիտակուցների նշանակությունը, վորպես կենդանու մարմնի շինարարության անհրաժեշտ նյութեր, ածխաջրերի և սպիտակուցների նշանակությունը, վոր-

պես եներգիայի աղբյուր: Հասկացողություն վիտա-չինների և նրանց նշանակության մասին:

Հասկացողություն գիտական էնթակրման մասին: Կենդանու կերի պահանջը՝ կենդանու տեսակի, հասակի, քաշի, արդյունավետության և այլ տեսակետից: Հասկացողություն արդյունավետ և ոգտակար կերի մասին: Գիտական հիմունքներով պատրաստած կերի նշանակությունը կենդանիների արդյունավետությունը բարձրացնելու համար:

3. ՇՆՋԱՌՈՒԹՅՈՒՆ

Թթվածնի անհրաժեշտությունը կենդանու կյանքի համար: Թոքային չնշառությունը բարձր կարգի կենդանիների մեջ: Թոքերի կազմությունը, թոքային բըշտիկներ: Ցուցադրել նկարներով: Հասկացողություն գաղափոխանակման մասին թոքերի մեջ: Փորձ: արտաշնչած ողի հետազոտություն: Թթվածնի բաշխումը կենդանու մարմնի մեջ արյան միջոցով: Հասկացողություն հյուսվածքներում կատարվող գաղափոխանակության մասին:

4. ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Արյուն, նրա կազմությունը, պլազմա, արյան սպիտակ և կարմիր մարմնիկներ:

Արյան կաթելը դիտել մանրադիտակով:

Արյան նշանակությունը սննդանյութերը և թթվածինը կենդանու մարմնում բաշխելու գործում:

Արյունաստեղծ որգանների մասին հասկացողություն (փայծաղը, կարմիր վոսկրածուծը):

Կաթնասունների արյան շրջանառության համակարգի կազմությունը՝ սիրտը, զարկերակները, յերակները, մազանոթները.

Ցուցադրել նկարներով, սրտի աշխատանքը, արյան շարժումը կենդանու մարմնի մեջ: Ցուցադրել արյան շրջանառությունն ամենալար սխեմաներով:

5. ԱՐՏԱԹՈՐՈՒԹՅՈՒՆ

Թթվացման և քայլայման պրոցեսների, ժամանակառաջացած պրոդուկտները և նրանց հեռացումը որպահիզմից՝ յերիկամների (մեզ), մաշկի (քրափինք) և թոքերի (ածխաթթու գաղ և ջրային գոլորշի) միջոցով։ Նկարներով ցուցադրել միզային ապարատի և մաշկի (քրափինքին գեղձերի) կազմությունը։

6. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՎՈՒՄ ԿԵՆՍԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԸ ԿԵՆԴԱՆՈՒ ՈՐԳԱՆԻՉՄՈՒՄ

Հասկացողություն նյարդային համակարգի նշանակության մասին։ Հասկացողություն կաթնասունների նյարդային համակարգի մասին՝ գանգողեղ, վողնուղեղ, նյարդեր։ Ցուցադրել նկարներով։ Հասկացողություն նյարդային համակարգի մասին ամբողջովին և նրա առանձին մասերի մասին (գանգողեղեղի, վողնուղեղի, նյարդերի)։ Փորձ գլուխած գորտի վրա։ Փորձ նյարդերի հատկությունը ցույց տվող։ Զգայարանները և նրանց նշանակությունը։

Հասկացողություն ներզատուցքային գեղձերի և նրանց նշանակության մասին, որինակ՝ վահանաձև և սեռական գեղձերը։ Ներզատուցքային գեղձերի ուսումնասիրության նշանակությունը կենդանաբուծության պրակտիկայի համար։

7. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

Սեռական գեղձեր և սեռական բջիջներ՝ սպերմատոզուզները և ձուն։ Ցուցադրել նկարներով։ Բեղմնափորություն՝ արական և իգական սեռական բջիջների միաձուլումը։ Կենդանիների արտաքին և ներքին բեղմնավորությունը։ Արհեստական սերմափորտմ և նրա նշանակությունը կենդանաբուծության լավացման պրակտիկայի գործում։

Հասկացողություն սաղմի զարգացման մասին։ Կաթնասունների կաթով սնկելը։ Անող որդանիզմի մեջ շնարար պրոցեսների գերակշռումը քայլայման պրոցեսների դեմ։ Մատղաչներին խնամելու առանձնահատկությունները։

Գյուղատնտեսական նոր տեսակի կենդանիներ ու ուաջնելու մասին հասկացողություն։ Նոր տեսակի կենդանիներ բուծելու պրակտիկան, վորպես ժխտումն «տերտերական» այն ուսուցման, թե կենդանիների բազմազան ձևերը աստվածային ստեղծագործության արդյունքն են։

8. ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Բույս և կենդանի։ Կանաչ բույսերը, վորպես որգանական նյութեր պատրաստողներ և եներգիա կուտակողներ։ Կենդանին, վորպես սպառող բույսի մեջ պատրաստված նյութերի և կուտակված եներգիայի։ Կանաչ բույսերի նշանակությունը բնության և գյուղատնտեսության մեջ։ Բուսաբուծության և անասնաբուծության կապը։ Բուսաբուծության և անասնաբուծության համերաշխությունը սոցիալիստական գյուղատնտեսության մեջ։ Գյուղատնտեսներն կազմակերպված գյուղատնտեսությունը, վորպես միակ ճանապարհ բնության ավելի լրիվ տիրապետելու համար։

Բ. ՈՒՍՄՈՒՆՔ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Ներածություն

Ի՞նչպես ծաղեց և զարգացավ մարդու մարմնի մասին ուսումնասիրություն կատարող գիտությունը։ Ի՞նչպես եր կրոնը պայքարում գիտության դեմ։ Մարդու վերաբերյալ գիտության նշանակությունն աշխատավորության առողջապահության և աշխատանքի առողջացման և ոացիոնալացման համար։

**Մարդու մարմնի գիտության ուսումնասիրության
նշանակությունն աշխատավորության համար:**

**1. Ի՞նչպես ե ԿԱՌՈՒՅՑՎԱԾ ՅԵԿ Ի՞նՉՊԵՍ Ե
ԱՊՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆԸ**

**Մարդու և բարձր կարգի կենդանիների մարմնի
կազմության արտաքին նմանությունը:** Մարդու մար-
մնի ուղղաձիգ դիրքի առավելությունը (ուղղաձիգ
քայլածք):

Կմախքը: Մարդու և կենդանիների կմախքի նմա-
նությունը: Մարդու կմախքի կազմության առանձնա-
հատկությունները նրա մարմնի ուղղաձիգ դիրքի կա-
պակցությամբ: Մարդու մարմնի մկանները և նրանց
աշխատանքը: Մկանային գործունեյության նշանակու-
թյունը աշխատանքային պրոցեսում:

**Մարսողության, չնչառության, արյան շրջանա-
ռության և արտաթորության որդանների և նրանց
ֆունկցիաների նմանությունը կենդանիների և մարդու
մարմնի մեջ: Աշխատանքի ազդեցությունը հիշյալ որ-
դանների գործունեյության վրա մարդու մարմնի մեջ,
ոնդի և թթվածնի մեծ պահանջ, նյութի և եներդիայի
մեծ ծախս, սրտի գործունեյության ուժեղացում, ար-
յան ուժեղ հոսանք դեպի աշխատող որդանները, թո-
քերի գործունեյության ուժեղացում, քրանքի արտա-
թորում և այլն:**

**Մարդու և կենդանիների նյարդային համակարգի
կազմության նմանությունն ու տարբերությունը:** Մար-
դու գանգուղեղի բարձր զարգացումը (գանգուղեղի և
վողնուղեղի քաշի տարբերությունը. գանգուղեղի մե-
ծությունն ու քաշը, մեծ ուղեղի կիսագնդերի կեղևի
ծալքավորումը): Մարդու բարձր մտավոր զաշդացման
մտածության և գիտակցության կախումն այդ հան-
գամանքից:

Մարդու և կենդանիների զգայարանները:

**Բարձր կարգի կենդանիների և մարդու մարմնի
ներքին կառուցվածքի նմանությունը:**

**Մարդու աստվածային բնույթի ունենալու մասին
տերտերական ուսմունքի անհեթհեթությունը:** Մար-
դու կենդանական բնույթը: Վո՞րոնք են մարդու ամե-
նագլխավոր առավելությունները կենդանիներից: Կրո-
նական «ուսմունք» համաձայն մարդը կենդանիներից
տարբերվում և «հոգու» առկայությամբ, իր աստվա-
ծային ծագմամբ և հանդերձյալ կյանքով:

**Գործիքներ արտադրելը և գործածելը և նախապես
ծրագրած պլանով գիտակցական գործունեյությունը
մարդու ամենագլխավոր առավելություններն են մյուս
կենդանիներից: Աշխատանքը մարդու գոյության ան-
համարժելի պայմանն ե:**

2. Ի՞նչպես ԱՌԱՋԱՑԱՎ ՄԱՐԴԸ

Գիտությունը և կրոնը մարդու մասին: Մարդու
աստծու ձեռքով ստեղծվելու կրոնի անհիմն «ուսմուն-
քը»: Մարդու կենդանական նախնիներից ձագելու ուս-
մունքի հիմնավորումը Դարվինի կողմից:

**Մարդու կենդանիներից ծագելու մասին ապացույց-
ներ:**

1) Որդանների մնացորդները մարդու վրա (մա-
զային ծածկոց և այլն):

2) Վողնաշարավոր կենդանիների և մարդու սաղ-
մերի նմանությունը:

3) Մարդու և մարդանման կապիկների մարմնի
կազմության առանձնահատուկ նմանությունը:

4) Մարդու նախնիների բրածո մնացորդները:

**Ի՞նչպես կատարվեց մարդու կապկանման նախնի-
ների մարդայացումը:** Ուղղաձիգ քայլվածքը և նրա
կապակցությամբ վերևու վերջավորությունների ա-

զատվելը, վորպես սկիզբ մարդայնանալու մեջ։ Աշխատանքի գերը հին մարդանման կապիկների մարդայնանալու մեջ։ Աշխատանքի նշանակությունը խոսքի, մտքի և գիտակցության զարգացման մեջ։ Վոչ թե ասոված, այլ աշխատանքն ստեղծեց մարդու։

Գիտության և տեխնիկայի զենքերով կրոնի դեմպայքարելու անհրաժեշտությունը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ուսման պլան	3
Հայոց լեզու	5
Բացատրական	

ԾՐԱԳԻՐ

Գյուղական դպրոցների I դասարան	
Քաղաքային դպրոցների I դասարան	
Ա. կիսամյակ	11

Գյուղական դպրոցների II դասարան	
Քաղաքային դպրոցների I դասարան	
Բ. կիսամյակ	15

Գյուղական դպրոցների III դասարան	
Քաղաքային դպրոցների II դասարան	17

РУССКИЙ ЯЗЫК

21

Введение	
Программа	
II класс в городских школах II и III классы в селских	
школах	21
Объяснительная записка	25

ԹԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

28

Բացատրական	
------------	--

Ծ թ ա գ ի թ

Գյուղական դպրոցների I դասարան	
Քաղաքային դպրոցների I դասարան	
Ա. կիսամյակ (մինչև 12-րդ կետ)	30
Գյուղական դպրոցների II դասարան	33
Գյուղական դպրոցների III դասարան	
Քաղաքային դպրոցների II դասարանի շարունակություն	34

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բացատրական	36
------------	----

Ծ թ ա գ ի թ


Գյուղական դպրոցների II դասարան	
Քաղաքային դպրոցների II դասարան	
Ա. կիսամյակ	44
Գյուղական դպրոցների III դասարան	
Քաղաքային դպրոցների II դասարան	
Բ. կիսամյակ	51

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բացատրական	55
------------	----

Ծ թ ա գ ի թ

Գյուղական դպրոցների II դասարան	
Քաղաքային դպրոցների II դասարան	
Ա. կիսամյակ	66
Գյուղական դպրոցների III դասարան	
Քաղաքային դպրոցների II դասարան	
Բ. կիսամյակ	73



54 298

ԳԻՒԾԻ Ա.



ПРОГРАММЫ
вёликовозраст. общеобразов. начальных школ
Армгиз. Эревань, 1935